

Բաժանորդագիրն կԱՆՆԻՒՆԻՔ թուրքիայ համար տարեկան 50 դր, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրոշմ կ'ընդունուի՝ 1 զրշ:նոցը 34 փարայի հաշւով, կամ 100 դրուշի փոխարէն 115 զրշ: ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար դիմել:

Առ ՏՅՈՒՆԻ-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պահլէ-Գարու, Թաշ Խան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاندہ
نومروده « زاعیک » غزته سی مدیری
بالا قاشیان حووان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՇՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 35

Շ Ա Բ Ա Թ

13 ՅՈՒՆԻՍ 1892

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ(1)

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ ԴԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա.

Աշխարհագրական ուսման կարեւորութիւնն այս վերջին տարիներու մէջ քանի մը նոր դասագրքերու ծնունդ տուաւ ի մեզ, որոց մէջ ամենէն աւելի ուշ գրուեց Պ. Գ. Մարգարեանի Աշխարհագրութեան ընդարձակ դասագիրքը:

Քիչ գիրք հրատարակուած է մեր

(1) Սոյն քննադատականը գրողը մասնաւոր նպատակներ չ'ունեցաւ, ինչպէս որ կարծեցին ոմանք, վասն զի կը հաւատայ որ քննադատական մը այն ատեն իւր նպատակին հասած կը լինի և հետեւաբար՝ օգտակար, երբ անաչառ է. և այսպէս ըլլալուն արգելքներ ալ չկային իրեն համար, վասն զի ոչ Պատմութեան և ոչ Աշխարհագրութեան ուսուցիչ լինելով, սոյն քննադատականին նիւթ եղող դասագրքին հեղինակին հետ իւր յարաբերութիւնք լոկ բարեկամութենէ մը անդին չէին անցներ. և ոչ ալ համահաւասար գիրքով դասագրքի մը հեղինակ լինելով՝ իւր ջանքը մէջ չէր կրնար վնաս տեսնել, ինչպէս կարծեց Պ. Մարգարեան:

Այլ ներկայ քննադատականը գրուեցաւ միմիայն այն գերագոյն պատճառաւ որ պէտք էր գրուեր, ինչպէս կը գրուին և պէտք է որ ալ գրուին այս ինչ կամ այն ինչ հեղինակին երկասիրութեանը վրայ, ինչպէս որ գրեցին Հօրոյ կամ Մօրոյ և դարձեալ ալ կրնան գրել. վասն զի քննադատութիւն մը խթան մ'է և ի՞նչ աւելի քաջալերութիւն կրնայ լինիլ հեղինակի մը քան անաչառ քննադատութիւն մը:

Ուստի գրքի հեղինակ մը պէտք չէ ծայր ասիանալ յուզումներ կրէ երբեմն աննպաստ քննադատականներ տեսնելով իւր երկոց վրայ, բաւական է որ անաչառ լինին:

մէջ որ այնքան ուշադրութեան եւ քննադատութեանց առարկայ եղած լինի որչափ եղաւ սոյն դասագիրքն, բայց ո՛չ իւր նորագոյն մէթոտին կամ հետեւած ուղղութեանը համար, այլ միայն իւր թերութեամբն և նա մանաւանդ ՍԽԱՆՆԵՐՈՎՆ:

Բոլորովին աւելորդ աշխատութիւն մը տարած պիտի լինէինք, եթէ սոյն գրքին վրայ նախապէս եղած բազմաթիւ քննադատութիւնք կատարելապէս ներկայացուցած լինէին իւր իսկական արժէքն, բայց որովհետեւ, գործին կարեւորութեանը նայելով, դժբա համառօտ գրութեանը էին, հարկ էր ուրեմն ընդարձակորէն և մանրակրկիտ աշխատութիւն մը՝ գիրքն ամբողջութեամբ բանասէր ազգայնոց անաչառ դատաստանին ներկայացնելու համար:

Թէ և քիչ մ'ուշ, բայց ահա կուգանք կատարել այդ աշխատութիւն (1). միթէ լաւ չէ՞ անագան քան երբէք:

Մարգարեան ընդարձակ դասագիրքն, որ կը բաղկանայ 414 երեսներէ, պարաստուած է ի պէս ազգ. բարձրագոյն վարժարանաց, գոնէ այդպէս կը գրէ հեղինակն գրքին ճակատն, իսկ նախադրուած յատկացուած է փայլուն ձօնի մը ուղղեալ առ Վսեմաշուք մի Անճնաւորութիւն: Երրորդ երեսը կը տեսնուի պաշտօնական գրութեան մը պատճէնն Ազգ. Կեդ. Վարչութեան Ուսումն. Խորհրդոյ կողմէ տրուած, որով Պատկառելի Խորհուրդը կը վաւերացնէ ներկայացեալ դասագիրքն և կը յանձնարուէ Ե. և Չ. բարձրագոյն դասուց ազգային վարժարանաց, և կը յաւելու, պաշտօնական ոճոյ բոլոր վսեմութեամբ, քէ՛րս ճշգրտեան եւ դասաւորութեան ճիւրջ եւ քէ՛րս դիւրուսոյ եղանակին,

(1) Բաւական ատենէ ի վեր պատրաստ ունէինք սոյն աշխատութիւնը զոր գրքի ձեւով պիտի հրատարակէինք, ինչպէս որ ալ ծանուցուեցաւ, բայց ի վերջոյ յարմար դատեցինք զայն ի լոյս ընծայել «Ծաղիկ» մէջ:

որպէս հաստատեցաւ ի ձեռնմաս ԳՆՆչաց, յամենայնի համաձայն գտնելով նորոգ ընկալեալ ծրագրի խորհրդոյ:

Յետոյ կուգայ յառաջաբանն որ կարի յանկուցիչ է, հեղինակն բաւական պերճախօսութեամբ հոն կը ճառէ սոյն կարեւոր ուսման վրայ մասնագիտական բոլոր կարողութեամբ, և մանկավարժական օրինաց դէմ կը գտնէ աշխարհագրական ուսուցման կարգ մը մէթոտներ որ ըստ ինքեան շատ լաւ և արդիւնաւոր ալ են մեզ համար: Ապա կը ներկայացնէ իւր դասագրքին ուղղութիւնն և ցարգ հրատարակուած դասագրոց բաղդատարար ունեցած նոր և ճոխագոյն ծանօթութեանց առաւելութիւնն, դիւրուսոյց մէթոտն և մանաւանդ մատնանիշ կ'ընէ այն մասնաւոր խնամքն զոր տարած է Օսմանեան Պետութեան աշխարհագրութեան բաժնին վրայ: Այս ամէնքն յառաջաբանին կամ լրագրական ազգերու միջոցաւ կը հոչակուին ի լուր աշխարհի, բայց թէ հեղինակն մինչեւ ո՞ր աստիճան հետեւած է իւր գծած ուղղութեան և կամ գործը յառաջաբանին ոգւոյն կը համապատասխանէ, ահա այս է խնդիրն, զոր պիտի ջանանք լուծել:

Սոյն դասագիրքն երկու մասերու կը բաժնուի: Առաջին մասովը հեղինակը կ'աւանդէ խիստ համառօտ գիտելիքներ ուսումնական և բնական աշխարհագրութեան վրայ (երես 1 էն 20), խիստ համառօտ բաղդատմամբ գրքի մը որ «ի պէս ազգային բաւարագոյն վարժարանաց» կը պատրաստուի. պէտք էր բնական և ուսումնական մասը աւելի կարեւոր ծանօթութեամբ ճոխացեալ ըլլար, վասն զի բարձրագոյն վարժարանաց աշակերտք այս մասանց վրայ պէտք է ստանան աւելի ընդարձակ տեղեկութիւններ:

Երկրորդ մասին մէջ աւանդուած են երկրիս հինգ մասանց քաղաքական աշխարհագրութեան դասերն որ կը կազմեն իւրաքանչիւր աշխարհի գիրքը:

կազմութիւնն, բնական նկարագիրն, տարածութիւնն և բնակիչը, գլխաւոր նաւահանգիստներն և գլխաւոր քաղաքները, գաղթականութիւնքն (եթէ կան), տեսութիւն մը քաղաքակրթութեան վրայ: Բայց ամբողջ դասագրքին մէջ ամենապարզ պատմական ծանօթութիւն մը չկայ: Ուրեմն, բարձրագոյն կարգի աշակերտաց պատմական աշխարհագրութեան վրայ համառօտ ծանօթութիւն մը տալն իսկ աւելորդ համարուեր է: Լաւ, ասիկայ կարծիք մ'է, բայց հեղինակն այս մասին յառաջադրելով մէջ աշխարհութիւն մը պէտք էր ընել, ուրեմն կամ յառաջադրանքին մէջ մոռցեր է այս մասին իւր կարծիքը յայտնելու և կամ, տարաբաղդաբար, ամբողջ դասագրքին մէջ պատմական մասը մոռացման զոհ գացեր է:

Դարձեալ իւրաքանչիւր երկրի վրայ տնտեսական ծանօթութիւններ տրուած են՝ ներածեալ և արտածեալ ապրանք տեսակներն և անոնց արժէից գումարն ցուցնող: Կերեւի թէ այդ անցողակի մի քանի ծանօթութիւնք պատճառ եղած են հեղինակին որ իւր դասագիրքը մինչեւ ցարդ հրատարակուածներէն գերազուս համարէ:

Այս մասերուն ինչպէս նաև գրքին ընդհանուր դասաւորութեան մէջ ալ կը տեսնուին բազում ուրիշ թերութիւնք զորս մի առ մի նշանակել անկարելի է, բայց այս ամէնքն սա համոզումը յառաջ կը բերեն, թէ հեղինակն կարի աճապարանք պատրաստած է իւր գիրքն: Թէ արդեօք ի՞նչ պատճառներ կային աճապարելու, այդ անծանօթ է մեզ:

Ինչ որ կրցանք սոյն քննադատականով ցուցնել մինչեւ ցարդ, գրքին թերութիւնքն են, զորս մասամբ ներքի պիտի համարինք նկատելով որ հեղինակին առաջին գործն է զի կը հաւատանք որ փորձառութիւն և քաջալերութիւն միայն կրնան աւելի կատարեալ գործեր արտադրել տալ հեղինակի մը:

Բայց կէտ մը կայ որոյ վրայ կը ծանրանանք և որ աններելի է գրքի մը համար: Սխալներն, որ տպագրական լիւնելէ չաւ հեռի են:

Թողով նաև մի կողմ անուշադրութեան սխալներու մեծիկի թիւ մը, կը նշանակենք աստ մի առ մի, երես առ երես, մեր տեսածներն:

Երես 6. — « Միջօրեայ կոչուած է այն չըջանալի (միջօրեական) որովհետև արեգակն այն գծին վրայ եկածին պէս՝ ներքեւ գտնուած աշխարհներու կէս օր կը լինի »:

Աշխարհներուն չէ որ կէս օր կը լինի, այլ այդ մոռացածին գծին տակ ուղղահայեաց ինկած քաղաքներուն:

Երես 11. — « Լեռնադաշտ կ'ըսուին բլրոց կամ լեռանց կաթարը գտնուած տափարակ տեղուանքը »:

Լեռնադաշտին սահմանն այդ չէ, լեռնադաշտ կ'ըսուին երկրի վրայի բարձր տափարակ տեղուանքը, ինչպէս են Թիպէթի, Կեդրոնական Ասիոյ լեռնադաշտերն:

Երես 14. — « Աղբիւր կ'ըսուին այն ջրերն որոնք կը բղխին լեռանց ստորոտներէն կամ դաշտագետներուն վրայէն »:

Աղբիւրը գետի մը բղխած տեղն է, և դարձեալ դաշտագետներուն վրայէն ջուր չբղխի:

Երես նոյն. — « Եթէ գետի մը հոսանքն ի վեր նաւարկենք, ալ կողմերնիս կ'ըլլայ նոյն գետին աջակողմեան ափունքը և ձախերնիս՝ ձախակողմեան ափունքը »:

Հակառակն հասկնալու է, վասն զի հոսանքն ի վար պէտք է նաւարկենք կարենալ որոշելու համար գետին աջ ու ձախ կողմերն:

Երես 15. — « Երեւելի է Մալթրէ-մի յորձանքն Լոֆֆօտէն կղզեաց մօտ (Կուլֆ Սթրիմ)՝ Մեծ յորձանքներ կան նաև Հնդկաց, Սաղաղական և Ատլանտեան ովկիանոսաց մէջ »:

Այս խօսքին մէջ յորձանքը՝ հոսանքին հետ չիոթուած է. այդ յիշուած մեծ Ովկիանոսներուն մէջ կան մեծամեծ հոսանքներ, ինչպէս են Կուլֆ-սթրիմ, Գիւլֆ-սթրիմ և այլն, և ոչ թէ յորձանքներ:

Երես 17. — « Աւստրալիա ունի 7,660 000 քառ. թիւ. և յարակից կղզիք 10,850.000 քառ. թիւ. տարածութիւն ունին »:

Մինչդեռ Աւստրալիա և յարակից կղզիք միանգամայն ունին 10 800.000 քառ. թիւ. տարածութիւն:

Երես 19. — « Լուսաւորեալ կ'ըսուին այն ազգերն որոնք կը բնակին գիւղերու կամ քաղաքներու մէջ, ունին կարգ և օրէնք, կ'զբաղին արհեստներով և վաճառականութեամբ, որպէս են Հայք, Պուլկարք, Յոյնք, և այլն. եւ քաղաքակրթեալ կ'ըսուին այն ազգերն կամ ժողովուրդներն որոնք չափ լուսաւորեալ են, ինչպէս Օսմանցիք, Անգլիացիք, Ֆրանսացիք »:

Բառերու գործածութեան սխալ կայ հոս, վասն զի լուսաւորեալ և քաղաքակրթեալ բառերն մի և նոյն նշանակութիւնն ունին և այս բառերու գործածմամբ կարելի չէ այդ ազգաց քաղաքակրթութեան աստիճանը ցուցնել. լաւ էր ըսել կէս-քաղաքակրթեալ և քաղաքակրթեալ:

Երես 24. — « Պիւէնեան ցամաքակղզիք (Սպանիա և Փորթուգալ) »:

Միծաղելի չիոթութիւն լեռանց ա-

նուններու, վասն զի Պիւէնեան լեռանց անունովն չէ որ ցամաքակղզին կոչուած է, այլ Իպէրեան լեռանց անունովն ցամաքակղզին ալ Իպէրեան կոչուած է. Իպէրեան լեռինք Միջերկրականի և Ադրատեան Ովկիանոսի աւազաններն իրարմէ կը զատեն:

Երես 31. — Անգղիա ընդհանրապէս խոնաւ, մուշապատ և անջրդի երկիր մ'է »:

Ճիշդ հակառակն է, վասն զի Անգղիա աշխարհիս ամէնէն ջրարբի երկիրներէն մին է. արդէն երկիր մը որ խոնաւ և մուշապատ է բնականապէս անջրդի չկրնար լինիլ:

Երես 32. — Իբր ծանօթութիւն կը տեսնուի « Գլխագիր նշանակուած են այն քաղաքներն միայն որք 100.000 է աւելի բնակիչ կը պարունակեն ». բայց գծադրութիւնը հոն է որ 12րդ երեսէն մինչեւ 400րդ երեսը 60էն աւելի քաղաքներ կրնամք ցոյց տալ որք 100.000է աւելի բնակիչ ունին և գլխագիր նշանակուած չեն: Միայն Մեծն Բրիտանիոյ և Ֆրանսայի մէջ 20 քաղաք յիշուած է առանց գլխագիր նշանակուելու, թէ և այդ քաղաքներուն մէջ կայ որ 450.000 բնակիչ ունի, ինչպէս Պրումընկամ. արդեօք այս ալ տպագրական սխալ է:

Երես նոյն. — « Քարտիֆ գլխաւոր նաւահանգիստ Անգղիոյ ». և դարձեալ երես 34. « Քարտիֆ՝ գլխաւոր քաղաք Կալէսի »:

Ասանկ անձա՛հ կրկնութիւններ չափ կան, ինչպէս պիտի տեսնուի կարգաւ:

Երես 45. — « Վիպորի՝ բանուկ նաւահանգիստ Տանիմարքայի և Աւ'րուս՝ ներքին քաղաք »:

Հակառակը հասկնալու է, վասն զի Վիպորի՝ նաւահանգիստ չէ և ոչ ալ Աւ'րուս՝ ներքին քաղաք:

Երես 50. — Պաղէ-Սէրայ և Սիմֆորոփօլ իրմի նաւահանգիստաց կարգըն անցած են, մինչդեռ երկուքն ալ ներքին քաղաքներ են:

Երես 53. — « Բացի Ռուսերէն որք կը վերաբերին Սլաւ ցեղին, կը պարունակէ նաև այլ և այլ ցեղերէ ժողովուրդներ, ինչպէս Լեհի »:

Լեհք ալ Սլաւ ցեղին կը վերաբերին և միայն կրօնքով կը տարբերին իրենց ցեղակից Ռուսերէն:

Երես 55. — « Ֆրանսոս ընդհանրապէս կը գտնուի բարեխառն գօտեոյն տակ »:

Բոլորովին աւելորդ է ընդհանրապէս բառը, վասն զի Ֆրանսոս բացարձակապէս բարեխառն գօտեոյն տակն է:

Երես 56. — « Ֆրանսոս բաժնուած է 89 գաւառներու (Տէրաթթման) »:

Ո՛րչափ երջանիկ պէտք է լինին Ֆրանսացիք որ, հեղինակին շնորհիւ, կ'

վերստանան իւրեանց կորսնցուցած երեք գումարներն:

Երես 58. — «Վերսայլ՝ Փարիզի հիւսիսային կողմը»:

Հակառակը հասկնալու է, վասն զի Վերսայլ Փարիզի հարաւային արեւմտեան կողմն է:

Երես 60. — Յրանալի կալուածոց մէջ մուցուած է յիշուիլ Նոր-Քալեօն-նիա կղզին, յովկիանիա:

Երես 63. — «Պելճիքա կը թրջեն երկու գետեր, Էսքօ և Մէօզ, որոնք կը թափին հիւսիսային ծով. և բաժնուած են բազմաթիւ ջրանցքներու»:

Աննիմաստ բացատրութիւն, պէտք է ըսել, այս գետեր իրար միացած են բազմաթիւ ջրանցքներով:

Երես 97. — Սպանիական կալուածոց մէջ յիշուած են նաեւ Ասորեան կղզիք որք Փորթուկալի կը վերաբերին, թէև, երես 101, Փորթուկալի կալուածոց մէջ ալ յիշուած է:

Երես 106. — Զիվիթա-Վէքիա երկու տեղ յիշուած է տարբեր դիրքերով. իբր նաւահանգիստ Հոովմայ՝ տես երես 106. և իբր ներքին գլխաւոր քաղաք տես երես 108:

Երես 109. — Ամենացաւալի մոռացութեամբ, սոյն դասագրքին մէջ յիշուած չէ ոչ ի չարս անգղիական կալուածոց և ոչ ալ Իտալիոյ աշխարհագրական նկարագրութեան բաժնին մէջ, ՄԱԼԹԱ կղզին իւր 160.000 բնակիչներով, և իւր յոյժ կարեւորութեամբն առեւտրական և ռազմագիտական կըրկին տեսակէտներով:

Երես նոյն. — Յիշուած չեն նաեւ, ի չարս իտալական նորահաստատ գաղթականութեանց, Ասապի և Մասուայի կալուածներն ի Կարմիր ծով:

Երես 114. — «Եւրոպական Թուրքիոյ տարածութիւնն է 165,438 քառ. քիւ. և բնակիչ՝ 4,500,000»:

Երկուքն ալ սխալ են, տարածութիւնն է 175,000 քառ. քիւ. և բնակիչն՝ 5,575,000:

Երես 128. — Կրետէ կղզւոյն տարածութիւնն տրուած է 2800 քառ. քիւ. Մինչդեռ տարածութիւնն է իբր 8500 քառ. քիւ:

Երես 137. — «Հնութենէ մնացած աւերակաց մէջ երեւելի են Բանքէոնը կամ Աթենասայ տաճարն»:

Բանթէոնը Փարիզի մէջ է, ուր կը թաղուին այսօր մեծ մարդիկ, իսկ Պարթենօն՝ հնոյն Աթենասայ տաճարը՝ կը գտնուի յԱթէնս:

Երես 158. — «Կովկասիա կը տարածուի համանուն լեռնագոտոյն հարաւակողմը՝ Սև և Կասպից ծովերուն միջև»:

Կովկասիա կը տարածուի Կովկաս լեռանց հիւսիսային և հարաւային կողմը

և երկու բնական մասերու կը բաժնուի, Յայսկոյս-Կովկասիա և Յայնկոյս-Կովկասիա: Վարչականապէս այս երկու մասերն 1879-ին ի վեր զստ փոխարքայութիւն մը չեն կազմեր այլ ևս:

Երես 160. — «Կովկասիա եօթը վարչական նահանգներու բաժնուած է»:

Այս բաժանում սխալ է, վասն զի Կովկասիա 12 վարչական նահանգներու կը բաժնուի, որոց 3ը կը գտնուի Յայսկոյս-Կովկասիոյ և 9ը Յայնկոյս Կովկասիոյ մէջ:

Երես 168—201. — Սոյն 34 երեսները կ'ամբողջեն Ասիական Թուրքիոյ բնական ու քաղաքական աշխարհագրութեան նկարագրութիւնն որ ամբողջ դասագրքին ամենէն անխնամ գրուած մասն է:

Այս մասին մէջ կը վխտան անհամար սխալներ, վարչական բաժանմանց, վիճակագրական, բնական աշխարհագրութեան ահաբեկ սխալներ որք պիտի ցոյց տրուին մի առ մի:

Ինչ տխուր մտածումներով կը համակի մարդկային տկար միտքը, երբ կը յիշուի թէ Ասիական Թուրքիոյ աշխարհագրական ամենակարեւոր դասերն այսքան անխնամ կերպով կ'աւանդուին քանի մը վարժարանաց մէջ ուր իբր դասաքերք կը գործածուին այս կարգի գրքեր...

Երես 168. — «Ասիական Թուրքիա, համեմատաբար իւր ընդարձակութեան, ունի ընդհանրապէս կանոնաւոր ծովափունք»:

Աննիմաստ բացատրութիւն. ինչ վերաբերութիւն կայ երկրի մը ընդարձակութեան և նորա ծովափանց կանոնաւոր ըլլալուն մէջ, պէտք էր ըսել. ա-սիական Թուրքիա, համեմատաբար իւր ընդարձակութեան, քիչ ծովափունք ունի:

Երես 171. — «Եփրատ կամ Մուրա-չայ» սխալ է, վասն զի Մուրատ-չայ Եփրատայ արեւելեան ճիւղն է:

Երես 174. — Ասիական Թուրքիոյ տարածութիւնն 1,250 000 քառ. քիւ. ըսուած է, մինչդեռ տարածութիւնն է 1,850,000 քառ. քիւ. (Հիճազ և Եմէն միասին առնելով):

Երես 175. — Իզմիտի նահանգն միայն անկախ նահանգ կոչուած է. սխալ է, վասն զի անկախ (միւսթաքիլ) (1) եղող նահանգներն չորս են. Իզմիտ, Պիլա կամ Չանագ-Քալէ, Մուսադէմ և Ջօր:

Երես 176. — «Խիւտալէնտիկեարի կուսակալութիւնն երեք նահանգներու

բաժնուած է. մինչդեռ կը բաժնուի հինգ նահանգաց որք են Պուսա, Քեօ-քանիա, Գարահիսար, Պիլէնի կամ Էր-քօդուլ և Գարասի կամ Պալլէսէր:

Երես 177. — Գարասի Խիւտալէնտիկեարի կուսակալութեան մէկ նահանգն ըսուած է, լաւ, բայց չէ յիշուած նոյն կուսակալութեան վարչական բաժանմանց մէջ, երես 176: Բայց ալ աւելի ցաւալին այն է որ Գարասի նահանգն իսկ երկու ուրիշ նահանգներու բաժնած է գրքին հեղինակըն և կոչած է՝ Չանագ-Գալէ կամ Պիլա և Պալլէսիւր, տես երես 177:

Այլանդակ սխալ, այդ ինքնաչէն նահանգն չուտով քակել պէտք է Գարասի կամ Պալլէսիւր Խիւտալէնտիկեարի տալու և Չանագ-գալէ կամ Պիլա՝ անկախ կոչուած նահանգաց կարգըն անցնելու համար:

Երես 172. — «Վանայ ծովափին երկայնութիւնն է 1300 քիւ.»:

Մենք այսչափ մեծ չէինք դիտեր այդ լիճը. իրաւ է որ երթալով մեծնալու վրայ է, բայց առ այժմ (1) երկայնութիւնն է 140 քիւ. չափ. լայնութիւնն 60 և ծովուն մակերևոյթէն 1600 մէթր բարձր է:

Երես 184. — Սամոն Գարսէմուցիի կուսակալութեան մէջ յիշուած է՝ Կ. Պօլսոյ վաճառականութեան ճանապարհին վրայ իբր կարեւոր և վաճառաւոր քաղաք. բայց երես 185, Տրապիզոնի կուսակալութեան մէջ (որ ճիշդն է) յիշուած է իբր երկրորդական քաղաք. այսպէս մի և նոյն քաղաքը երկու անգամ յիշուած է տարբեր դիրքով և նըկարագրութեամբ:

Երես 189. — «Բաղէշի կամ Պիթիւսի կուսակալութիւնն կը բաժնուի հինգ գաւառներու, որք են Պիքիս, Մուլ, Սիերդ, Արկանա, Խարբերդ»:

Այս տողերու մէջ չորս սխալ կը հաշուին:

Ա. Կուսակալութիւն մը նահանգներու կը բաժնուի և ոչ թէ գաւառներու:

Բ. Բաղէշի կուսակալութիւնը չորս նահանգներու կը բաժնուի, որք են Բաղէշ, Մուլ, Սիերդ և Կիցն:

Գ. Արկանա՝ Տիարպիլիի կուսակալութեան մէկ նահանգն է և ոչ թէ Բաղէշի գաւառն:

Դ. Որ ամենէն սոսկալին է, Խարբերդ Բաղէշի կուսակալութեան մէկ գաւառը նշանակուած է, մինչդեռ հետեւեալ երեսին մէջ (190) Խարբերդ իբր

(1) Միւսքափիլ կը կոչուին այն նահանգներն որոնք վարչականապէս ոչ մի կուսակալութեան կը վերաբերին, այլ ուղղակի կեդրոնական իշխանութենէն կախեալ են:

(1) Յամի Տեառն 1890 հոկտ. 5, այսինքն այն թուականին յորում վաւերացաւ ներկայացեալ դասագրքն Ազգ. Կեդր. Վարչութեան Ուսումն. Խորհրդէն:

առանձին կուսակալութիւն ցուցուած է որ ճիշդն է:

Երես նոյն.— Յաջորդաբար երեք անգամ յիշուած են, Արդըն, Արդանա, կամ Արդընի և Արկանա:

Անուններու և տեղերու չփոթու-
թիւն կայ, պէտք էր ըսել:

Արկանա կամ Արդնի՝ Տիարպէթիի կուսակալութեան մէջ:

Արդըն (Խարզան) և ոչ թէ Արդըն՝ Բաղէշի կուսակալութեան մէջ:

Երես — 191. Մալաթիոյ նահանգն՝ Տիարպէթիի կուսակալութեան մէջ նը-
շանակուած է, մինչդեռ Մալաթիա՝
Խարբերդի կուսակալութեան մէջ նա-
հանգն է:

Երես 193.— «Սուրիա՝ երեք գա-
ւառներու բաժնուած է, բուն Սուրիէ,
Պաղեստին, և Ճէպէլի-Լիպան (արտո-
նացեալ կուսակալութիւն)»:

Այս բաժանումը սխալ է, վասն զի
Սուրիոյ մէջ կան երկու կուսակալու-
թիւն՝ Պէրուք և Շամ, և երկու նա-
հանգ՝ Երուսաղէմ որ անկախ (միւսթա-
թիլ) է, և Լիբանան որ ինքնօրէն է:

Երես 192.— Այնթապ՝ Եփրատի վը-
րայ յիշուած է. Եփրատ ո՛ւր, Այն-
թապ ո՛ւր:

Երես 194.— «Պաղէստինու հարա-
ւային կողմը կը գտնուի Լիբանանու
արտօնացեալ կուսակալութիւնը»:

Ճիշդ հակառակն է, Լիբանան՝ Պա-
ղէստինու հիւսիսային կողմն է:

Երես 196.— «Մուսուլ՝ Տիգրիսի աջ
եզերաց վրայ, Քույուսնուգի լեռնա-
դաշտին դիմաց»:

Ինչ տարօրինակ սխալ, Քույուսնու-
սնուգի լեռնադաշտ կոչածն ուրիշ բան
չէ բայց եթէ հողակոյտ մը զոր երկու
հաշակաւոր հնագէտներ, Պ. Պ. Պօթա և
Լայարա, յաջորդաբար պեղելով անդ
գտան Նինուէի աւերակներն:

Երես 197.— «Ամասա՝ Տիգրիսի վը-
րայ»:

Պէտք է ըլլայ Ամարա:

Նոյնպէս Նէնէս փոխանակ Նէնե
կամ Նէնէ: Իսկ էլ Հասա իբր քաղաք
նշանակուած է, մինչդեռ Պարսից ծո-
ցին երկայնքը Արաբիոյ Հիւսիսային
կողմը ընդարձակ երկիր մ'է:

Երես 198.— Տխուր մոռացմամբ
Կիպրոս կղզին չէ յիշուած, հակառակ
իւր ունեցած կարեւորութեան Միջերկ-
րական ծովու մէջ:

Ա. ՊԵՏԻՃԵԱՆ

(1) Մարգարեան Աշխարհագրութե-
նէն դաս առնող աշակերտք պարտին
մէկ մէկ հատ ի ձեռին ունենալ «Ծա-
ղիկ» ներկայ թիւէն, աշխարհագրու-
թիւնը սխալ չը սովորելու համար:

Ծ. ԽՄԲ.

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

... Խմբագիր.

Պատուական «Ծաղիկ» Շաբաթա-
թերթիդ մէջ, Մեծ. Ա. Յ. Այվազեան
էֆէնտի պարբերաբար կը հրատարակէ
ազգային մեծանուն անհատից կենսա-
գրականքն, որք ամենայն սիրով և մեծ
հաճութեամբ կը կարգացունի հասա-
րակութեան կողմանէ:

Յիշեալ Մեծ. էֆէնտին, «Ծաղիկ»-ի
վերջին թուով Մեծ-Հիւնքեարպէյէն-
տեան Արժ. Տ. Յովհաննէս Քահանայի
(որոյ ծածկանունն է Սալիսի) կենսագը-
րականին առթիւ՝ յիշած է Հայ-Աեուղ-
ներու մի քանին ու անուանքն, որոնք
որ իւր յիշողութեան տակ ինկած են:

Հայ Աեուղներու, սոյն ազգային հե-
ղինակներու՝ թիւն բաւական շատ են,
որք զանազան ծածկանունաց ներքեւ հե-
ղինակած, և երբեմն ոմանք եւս հրա-
պարակային հաւաքումներու մէջ խօսած
են իմաստալից բանաստեղծութիւններ.
կրօնական, բարոյական, խրատական,
սիրային, և այլն, Տաճկերէն լեզուաւ.
գտնուած են ոմանք եւս որք երգած
են հայերէն:

Սոյն Հայ Աեուղներու շարքին մէջ
գտնուած են այնպիսիք եւս, որք ա-
ռանց գիտնալու գրեւ ու կարգաւն, ու-
նակութեամբ վարժուած և երգած են
բանաստեղծական գործեր՝ որ հասա-
րակութեան զարմանք պատճառած են.
գտնուած են այնպիսիք, որք բոլորովին
կոյր եղած են և ոմանք միականի:

Հայ Աեուղներու մի ամբողջ շարքն
հետաքրքրական գործ է, հանդերձ նո-
ցա իսկական անուամբ և ծածկանունամբ
(մալսէլս): Մեք ի ձեռին ունեցած հա-
ւաքածոյն՝ այժմ կուտամբ հրատարա-
կութեան, ապագային թողով նոցա ժա-
մանակագրական կարգն և ամէն միոյն
համառօտ պատմութիւնն, այսինքն կեն-
սագրականն:

Թէև քաջ գիտեմք թէ՛ ունիմք դեռ
շատ Հայ Աեուղներ որոց անուններն և
ծածկանուններն մեզ անծանօթ մնացած
են, մեր այս ցուցակն հրատարակուե-
լէն ետև ի հարկէ հետաքրքրիք պիտի
ամբողջացնեն պակասներն որոց անուն-
ներն և ծածկանուններն լսած են և քաջ
ծանօթ է իրենց:

Անուանք Հայ Աեուղներու

1. Նիհասի, Տ. Տ. Յակովբ Պատ-
րիարք Նալեան:

2. Թալիպի, Տ. Յովհաննէս Եպիս-
կոպոս:

3. Իսէվի, Տ. Յակովբ Վարդապետ
Պէրպէրեան:

4. Սալիսի, Տ. Յովհաննէս Քահա-
նայ Հիւնքեարպէյէնտեան, հայր արդի
Տ. Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէ-
յէնտեանի:

5. Զէհնի, Տ. Անդրէաս Քահանայ
Մաղնիսացի, այժմ ի Պրուսա:

6. Բէմգի, Տ. Յակովբ Քահանայ Ե-
դեսացի:

Ծանօթութիւն. Սոյն Բէմգի ծածկ-
անուն ներքեւ մի ուրիշ Հայ Աեուղ ևս
կայ աշխարհական, տե՛ս վարը:

7. Տէվրանի, Մանուկ Էրզրումցի.
երգած է Տաճկերէն և մեծ համակրանք
վայելած է. վախճանած է 1889 ի Կե-
սարիա:

8. Նամի, Յակովբ Կ. Պօլսեցի. եր-
գած է Տաճկերէն. սա 1870 թուական-
ներուն մեծ հռչակ հանած է ի Կ. Պո-
լիս, և համակրանք վայելած է Օգոս-
տափառ Սուլթանի կողմէն:

9. Հայաթի, Միքայէլ՝ Մշոյ Բլուր
գիւղէն, երգած է Տաճկերէն. սա նը-
ւագած է նաև ի ներկայութեան Սուլ-
թան Մահմուտի:

10. Զէհնի, Կարապետ՝ Վանայ Կեմ
գիւղէն. սա աշակերտած է Աեուղ Նէն-
միի (Կարնեցի Գրիգոր, տես վարը).
երգած է Տաճկ. և երբեմն Հայերէն:

11. Կիւնքաթի, Յովսէփ Ամասիացի.
սա յետոյ եկած է ի Կեսարիա և անդ
կարգուած ու վախճանած:

12. Մահնուպի (ՄԵՄ)(1), Հաճի Պո-
ղոս Պօճճէլեան, Կեսարացի. սա երգած
է Տաճկերէն, մեծ հռչակ ունեցած է
1880ին:

13. Խաֆի, Խաչիկ Կ. Պօլսեցի. Իւս-
կիւտար թաղէն. երգած է Տաճկերէն,
և մեծ հռչակ հանած է:

14. Քեամիլի, Պաղտատար Կարսե-
ցի. նախ երգած է Տաճկերէն և ի վեր-
ջոյ Հայերէն:

15. Բեռուեան, Միքայէլ Մաղնիսա-
ցի, երգած է Տաճկերէն:

16. Բէմգի, Յարութիւն Սեբաս-
տացի:

17. Բիւրեանի, Հաճի Գրիգոր Պալը-
քէսէրցի. Միականի(2). երգած է Տաճ-

(1) Մահնուպի մը եւս կայ, որ կը
կ'աշուրի (ՓՈՔՐ) այսինքն Պէտլիք Մահ-
նուպի, Քիւլլիք Մահնուպի:

(2) Սա մի երգ ունի ծիծաղարժ, որ է՝
Պիր տէտէմ վար իտի թիրեաթի իտի չօդ,
էնֆիլյէ իշիւն թա Եանեայա կէթտի.
Չէքոյիլի էնֆիլյէ Եանեատա տա եօդ,
Եանեատա տա էօթէ տիւնեայա կէթտի:

Պիր ճէվիլ կէօրտիւմ տէր պատէմէ պէն-
գէր,
Հիշ պիր սէօզիւ եօդ տուր ատէմէ պէն-
գէր.

Պապամըն աղլը տա տէտէմէ պէնգէր,
Օ տա քիւլազ իշիւն Գօնեայա կէթտի:

Պիր քեար պուլտու եօդ տուր տիպի
Բիւրեանի,
Բուզիկեար տօլտուրտու ճէպի Բիւրեանի.
Պապամըն՝ տէտէսի կիպի Բիւրեանի,
Նազիֆ սապօն իշիւն Գանտիայա կէթտի:

կերէն և հռչակ ունէր իւր արհեստակցներու մէջ:

18. Նազմի, Սիմէօն Էրզրումցի, երգած է Տաճկերէն և Հայերէն:

19. Մէվզուհի, Պետրոս Կեսարացի, երգած է Տաճկերէն:

20. Ֆազիլի, Հաճի Յակովբ Հալաճօղլու, Կեսարացի, երգած է Տաճկերէն և մեծ հռչակ ունեցած է իւր արհեստակցաց մէջ:

21. Պահարի, Գրիգոր Կ. Պօլսեցի:

22. Րըզզի, Յակովբ Կ. Պօլսեցի, խառնուղէն, երգած է Տաճկերէն:

23. Քեամիլի, Պաղտատար Կարսեցի, երգած է նախ Տաճկերէն, վերջերս Հայերէն. վախճանած է 1832ին:

24. Սերվէրի, Գրիգոր Պրուսացի:

25. Նէմմի, Գրիգոր Կարսեցի:

26. Քիւննարի Յովհաննէս Կարսեցի, երգած է Տաճկերէն. վախճանած է 1844ին 80 տարեկան հասակին մէջ:

27. Լիսանի, Հաճի Կարապետ Գալֆայեան՝ արհեստիւ ոսկերիչ էր. երգած է Տաճկերէն: վախճանած է 1876ին. իւր զաւակը՝ Մկրտիչ ազա Գալֆայեան այժմ ի Կ. Պոլիս առաջնակարգ ոսկերիչ է, և կը հեղինակէ երբեմն Տաճկերէն բանաստեղծութիւններ. — դեռ ևս ունինք երկու այլ Լիսանի Առուղներ, են՝

28. Լիսանի, Երզնկացի Հայ ոմն:

29. Լիսանի, Գաբրիէլ Ախլցխոցի, երգած է Տաճկ. և երբեմն Հայերէն:

30. Նիսայի, խառնուղէն՝ Կարնոյ Հենճ գիւղէն. երգած է Տաճկ. և սորա զաւակն ևս եղած է հռչակաւոր առուղ, որ է՝

31. Նիւմայի, Իսահակ՝ Կարնոյ Հենճ գիւղէն, որդի Նիսայի Առուղիմ. երգած է Տաճկերէն:

32. Մահմուդի (Փոթր), Յովհաննէս Տփլիսեցի. այժմ կը բնակի ի Կեսարիա, կ'երգէ Տաճկ. և երբեմն նաև Հայ:

33. Շիւբի, Աւետիք Տրապիզոնցի, երկու առօք կոյր, երգած է Տաճկերէն:

34. Կիւֆի, Սարգիս Էփ. Գարաբաշեան Կ. Պօլսեցի:

35. Իֆրաի, Աւետիս, Կարնոյ Գարահան գիւղէն. երգած է Տաճկերէն:

36. Հավէսի, Թադէոս Ալէքսանդրապօլցի. երգած է Տաճկ. և Հայերէն:

(Շարունակելի) Ի Հաւաքածոյից

1892 Յունիս 3

Կ. Պօլիս

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պրուսայի Առաջնորդ Գեր. Բարթոլոմէոս Սրբազան արքեպիս. չորեքշաբթի օր Մաքսային պաշտօնատունն երթալով, այցելութիւն տուաւ մաքսային վերատեսուչ Հասան Ֆէհմի փաշային՝ վեհ. Սուլթանին կողմանէ Ն. Վսեմութեան շնորհեալ ականակուռ Մէճիտլէ պատուանշանին առթիւ առ ի շնորհաւորութիւն:

— Երուսաղեմայ լուսարարպետ Գեր. Սահակ Եպիս. Խապայեան և Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ Ծ. վարդ. Պալեան երկուշաբթի օր այցելեցին Բերայի Արուեստանոցն, և այդ հաստատութեան վիճակը քննելով՝ քաջալերական խօսքեր ուղղեցին առ աշակերտուհիս:

— Գղիի աղբային պաշտօնական մարմինք յայտագրած լինելով ի Պատրարքարան թէ՛ Կարնոյ առաջնորդութիւնն, որոյ իրաւասութեան ենթարկեալ է Գղի, պէտք եղածն ի գործ չդնէր Գղիի վիճակային գործերը կարգադրելու համար, Պատրարքարանի կողմանէ այս մասին հարկ եղած յանձնարարութիւններն եղան Կարնոյ առաջնորդութեան:

— Արղընիի մերձակայ Ս. Յովհաննէս եկեղեցին քայքայեալ վիճակի մէջ և Ժողովուրդը հոգեւոր միութարութենէ զուրկ գտնուելով, խնդրուած էր Պատրարքարանէն, որպէս զի հոն փոքրիկ մատուռ մը կառուցուելու համար պէտք եղածն ի գործ դրուի: Պատրարքարանն հարկ եղած անօրէնութիւններն ըրած է նախապատրաստական գործողութեանց համար:

— Պալատու թաղ. Խորհրդոյ անդամ ընտրուեցան Աւետիսեան Աղաճան, Երէցեան Ներսէս, Սարաճեան Գրիգոր և Գառեան Սրչակ: Վաղը համեմատականի վրայ պիտի կատարուի մնացեալ հինգ անդամոց ընտրութիւնը:

— Ըստ խնդրանաց Գատը-Գիւղի հասարակութեան, Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան, կիւրակէ օր՝ հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց ի Ս. Թագաւոր Եկեղեցւոյ և Տօն Կաթողիկէի առթիւ գեղեցիկ և իմաստալից քարոզ մը խօսեցաւ: Նորին Գերապատուութիւն շաբաթ գիշեր և

կիւրակէ առաւօտ հիւրընկալուեցաւ ի տան Կիւլպէնկեան Պատրիկ Էֆէնտիի:

— Գեր. Տ. Սահակ Եպիսկոպոս խապայեան՝ Ս. Երուսաղեմայ վանուց տըպարանին համար պատրաստ տառեր գնելու համար՝ Գեր. Տրդատ Ծ. վարդապետին հետ, ազգային գլխաւոր տպարաններն ու ձուլարաններն այցելած ու սակարկութեան մատն է:

Կը լսեմք թէ, թէ՛ Սահակ Եպիսկոպոս և թէ՛ Տրդատ վարդապետ՝ գրական հեղինակութիւններ ունին մօտերս ի լոյս ընծայելու:

— Անցեալ կիւրակէ օրը՝ Գուգիւռն. ձուգի եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ Պրուսայու Առաջնորդ՝ Գեր. Տ. Բարթոլոմէոս սրբազան Արքեպիսկոպոս Ս. Պատարագ մատոյց, ի ներկայութեան յոգնաթիւ բազմութեան մ'որ դիմած էր մայրաքաղաքի մօտաւոր և հեռաւոր թաղերէն ու արուարձաններէն:

Սոյն եկեղեցական հանդիսին կ'սպասուորէին, ի մէջ այլոց, Գեր. Տ. Արիստակէս Ծ. վարդապետ վանքեան, Արթ. Տ. Վրթանէս վարդապետ Բապուճեան, Արթ. Տ. Ահարօն վարդապետ Սահրոյեան, Տ. Ոսկի Աւագ քահանայ Օհանեան, Ս. խաչ եկեղեցւոյ քահանայից դասը: Երաժշտաց ընտիր խումբ մը մեծապէս նպաստեց սոյն հանդիսին շքեղութեան:

Նորին Սրբազնութիւն այս առթիւ իմաստալից քարոզ մը խօսեցաւ, և ի վերջոյ, վեհ. Սուլթանին կենաց բարեմաղթութիւններ ըրաւ: Ժողովուրդն ամենեւրով ձայնակցեցաւ:

Նորին Գերապատուութիւն շաբաթ երեկոյին հիւրընկալուեցաւ թաղին երեւելիներէն պատուաւոր աղջայնոց մը տունն, ուր յատուկ սեղան տրուեցաւ ի պատիւ Պրուսայու Գերապատիւ Առաջնորդին:

Իսկ կիւրակէ առաւօտ՝ յետ Ս. Պատարագին, հիւրընկալուեցաւ Թաղական խորհրդոյ Ատենայետ Մեծ. Մինասեան Համբարձում Էֆէնտիի կողմանէ, որ այս առթիւ սեղանի հրաւիրած էր նաև բազմաթիւ եկեղեցականներ ու աշխարհականներ:

— Ս. Երուսաղեմայ Աթոռոյն Լուսարարապետ խապայեան Գեր. Տ. Սահակ սրբազան, Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տ. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան և Ռումանիոյ ու Պսկարիոյ այցելու հովիւ Երէցեան Գեր. Տ. Գէորգ Ծ. վարդապետ՝ երկուշաբթի օր ի Գատը-Գիւղ երթալով, այցելութիւն տըուին Ամեն. Տ. Մեթիսեղեկ սրբազան Արքեպիսկոպոս Մուրատեանցին, իրենց յոգնավաստակ վարժապետին յերուսաղէմ:

Կը խնդրուի «Ծագիկ» թատանորդագրութենէ պարտք ունեցող մեր գաւառացի թատանորդներէն՝ վճարել ընդ փոյթ:

— Կեսարիոյ Առաջնորդ՝ Գեր. Տ. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան, Վսեմ. Եսայեան հարազատաց Ազնուաշուք մօր՝ Տիկին Աննա Եսայեանի այցելութեան գնաց ի Պէտլիքաբէքէ առ ի շնորհաւորութիւն, Եսայեան Վսեմ. Յովհաննէս Էփէնտիի նազեղաշուք դստեր՝ օրիորդ Նուարդի ամուսնութեան առթիւ, ընդ ազնուաշուք Գալուստ Էփ. Կիւլպէնկեան:

— Յառաջիկայ շաբաթու Մաղիկ ուրբաթ օրու ընէ պիտի հրատարակուի, շաբաթ օր Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնը լինելով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քանասայի տարածութեան նայելով փոքրաթիւ բնակչաց աճումը խորհուսելու համար, կառավարութիւնը 12է աւելի անդամ ունեցող ընտանեաց ձրի հող տալ խոստացաւ: Մէկ քանի օրուան մէջ այդ պարգևին արժանի 1500 ընտանիք ներկայացեր են:

— Աթէնքի մէջ այրի կին մը որուն տունէն փախստական դատական պաշտօնէի մը գողցած արծէթ ուղթերը գտնուած էին, անունը արատաւորութեւն համար բանտին մէջ անօթի մնալով անձնասպան եղաւ: Նոյն փորձն ըրաւ նոյն գործին մէջ անբաստանուած ուրիշ կին մ'ալ:

— Կլասպոն երեսփոխանական գործաւոր ընտրելոյ մը նամակ մը գրելով, յառաջիկայ ընտրութեանց մէջ գործաւորական դասուն յաջողութեան, որով և իւր խորհրդոց ու ծրագրոց իրականացման վրայ մեծ յոյս յայտնէր է:

— Անգլիոյ ելւմտից նախարար Պ. Կօլըն բանախօսութեամբ մը ջատագովեր է Լորտ Սալիզբորի արտաքին քաղաքականութիւնը և ցաւ յայտնէր է որ յառաջիկայ ընտրութեանց բերմամբ արտաքին գործոց նախարարը (Սալիզբորի) իւր պաշտօնէն պիտի դադարի:

— Ամերիկացի ծանօթ հրատարակագիր Պ. Բոլթնի-Պիճլօ, որ «Վիլհէլմ կայսր և իւր արեւելեան դրացիք» անուն գիրք մը հեղինակած է, Ռուսիոյ մէջ զբօսական պտոյտ մը կատարած ատեն արտաքսուեցաւ: Պ. Պիճլօ Վիլհէլմ կայսեր դասընկերն եղած և բարեկամն է:

— Անգլիոյ Վիլթօրիա թագուհւոյն դուստր՝ Լոսնի Լուիզ իշխանուհին իւր մօրը կիսանդրին քանդակեր է և Զիքուկոյի Արուեստահանգէսը պիտի զրկէ:

— Պէլիոյ մէջ խորհրդարանական ընտրութիւնը աւարտեցան: Նորընտիր Երեսփոխանութիւնը պիտի վերաքննէ Պէլիոյ Սահմանադրութիւնը:

— Սպանիոյ մէջ մայիս 31ին կիրակի օրը փոթորիկ պահուն երեք եկեղեցեաց վրայ կայծակ իջաւ: Մէլիսի եկեղեցին բազմութեամբ լեցուն լինելով, 10 մարդիկ կայծակնաւոր եղան և 28 անձինք ալ վիրաւորեցան:

— Ափրիկէի Ուկանտա երկրին մէջ վերջերս բողոքականաց և կաթոլիկներուն միջեւ ծագած խնդրոց պատճառ կը համարուի արեւելեան Ափրիկէի անգլիական ընկերութիւնը որուն թեաքիւթեան ներքեւ կը գտնուի այդ երկիր: Զրոյց կայ թէ ընկերութիւնը կը հրաժարի իւր թեաքիւթեանէն, սակայն դեռ հաստատուած չէ:

— Անգլիոյ Երեսփ. ժողովը վերջապէս ընդունեց Իւլանտայի նախնական կրթութեան օրինագիծը:

— Լոնտոնի Նիու Օրիէնթըլ Պանքին անանկութիւնը հաշուեյարդարութեամբ պիտի կարգադրուի, փոխանակ դատավարութեան դիմելով:

— Տանովէյի ծովեզերքը Ֆրանսական կառավարութեան կողմանէ պիտի պաշարուի՝ թոյլ չտալու համար Պէհանգէն թագաւորին որ օտարներէ զէնք ընդունի:

— Մառնի անգլ. դեսպանը, ինչպէս նաեւ անգլ. դեսպանատուն միւս պաշտօնեայք հիւանդացիներ և այսպէս յարաբերութիւնք դեռ ևս խզուած կը մնան:

— Մառնի կառավարութեան և սահմանակից ցեղերուն միջեւ տեղի ունեցած պատերազմին առթիւ Սպանիա մարտանաւ մը զրկեց՝ իւր թեաքիւթեան ներքեւ գտնուող Ալճէզիրա երկրին չէզոքութիւնը պահպանելու համար:

— Անգլիական Բէքոնիա շողենաւը որ 500 տակառաջով քարիւղ բեռցած Ֆիլադէլֆիայէն կուգար, Ֆրանսական Պէլյո նաւահանգստին մէջ կայծակէ մը կրակ առնելով, յունիս Զին այրեցաւ: Մարդու կորուստ ալ կայ:

— Միացեալ-Նահանգաց մէջ Մոնթէ-Քրիսթոյի երկաթուղոյն հսկողը Պ. Նէլսըն՝ սոյն գծին գործաւոր չորս Իտալացոց կողմանէ սպանուեց է: Պ. Նէլսընի վաթսուն բարեկամք Լինչի օրինօք այդ չորս Իտալացիները սպանեցեր են:

— Էմիլ փառայի մահը կը հերքուի: Փաշան Պուքօսա հասեր է:

— Քոնկոյի մէջ պէլիական զօրաց և գերեաց վաճառականներու միջեւ ճակատամարտներ տեղի ունեցեր են անցեալ շաբաթու:

— Յունաստանի թագաւորն ու թագուհին Տանիմարքայէն Աթէնք դարձան շաբաթու:

— Իսպիոյ թագաւորն ու թագու-

հին Գերմանիոյ արքունիքն այցելեցին շաբաթու Բոցտամի պալատան մէջ:

— Շուէթի թագաւորն՝ իւր եւրոպեան ուղեւորութենէն դարձին՝ Տանիմարքայի արքունեաց ալ այցելեց:

— Իսպիոյ նոր նախարարութիւնն առաջարկած առժամանակեայ ելմտացոյցը վաւերացաւ նաեւ Մերակոյտին կողմանէ:

— Գերմանիոյ կայսեր կրտսեր քոյր Մարկրիտ իշխանուհին՝ Նշանուեցաւ Հէսի Ֆրէտէրիկ Քարլ իշխանին հետ:

— Պիզվարֆ իշխանը շաբաթու Վիէննա էր ուր ներկայ գտնուեցաւ իւր որդւոյն հարսանեաց հանդիսին: Այս առթիւ բաւական մեծ իրարանցում կար Վիէննայի մէջ:

— Յունաստանի նոր նախարարութիւնը կազմուեցաւ Պ. Թրիքուրիսի ձեռամբ որ ստանձնած է նախարարապետութեան և ելւմտից նախարարութեան պաշտօնները:

— Ռուսիոյ և Պարսկաստանի միջեւ առեւտրական յարաբերութիւնները զարգացնելու համար վեց միլիոն ռուբլի դրամագլխով ընկերութեան մը կազմութիւնը վաւերացուց Զարը: Այս ընկերութիւն երկու երկիրները միացնող երկաթուղեաց արտօնութիւնը պիտի առնու:

— Կովկասի մէջ հնտախոս ծագեր է կ'ըսուի:

— Հոլանտայի Վիլհէլմինա 12 ամեայ թագուհին հոլանտական Առիւծ պատուանշանին մեծ ժապաւէնը զրկեր է յատուկ նամակաւ՝ Գերմանիոյ գահաժառանգ տառնամայ իշխանին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգոնաբաւոյնքիւնք. — Այլ Նէվլատ Էփէնտի՝ Էրպայի և Ճավիտ պէյ՝ Սուլէյմի (Սեբաստիո) գայմադամ, Մուսթաֆա Էփէնտի՝ Գալատիոյ, Սապիթ Էփէնտի՝ Տիգրանակերտի և Բէշիտ պէյ Վանայ Տէֆթէրտար անուանեցան:

Ասիւնանք. — Վեհ. Սուլթանի գահարաւճառ Զաւագճեան Ստեփան Էփէնտի Սալիսէ, Ադրիանուպօլսոյ թըղթատարական և հեռագրական ընդհանու տնօրէն՝ Խայրի Էփէնտիի Իւլա Բ., Նազիլլիի թաղապետական բժիշկ Ապտիւրրահման Նուրէտտին Էփէնտիի՝ Սանիյէ երկրորդ, Պարթընի գայմադամ Ահմէտ Բամիզ Էփէնտիի՝ Բապիւսի աստիճանները տրուեցան:

Պատգոնաբաւ. — Կայս. թիկնապաշ նաւային Ֆերիք Ահմէտ Բաթիպ փառայի ականակուռ Օսմանիյէ, Մաքսային վերատեսուչ Հասան Ֆէհմի փառայի ակա-

նակուռ Մէճիտիյէ, Միջերկրականի անգլ. նաւատորմին հրամանատար ծովակալ Սըր Ճօրճ Թրայընի Մէճիտիյէ առաջին, Պրուսայի պահեստի զօրաց հրամանատար Ֆէրիք Հիւսէյին փաշայի Օսմանիյէ երկրորդ, Վանայ երեւելիներէն Ղալիպ փաշայի Մէճիտիյէ երկրորդ, Ասորուց Պատրիարքին մայրաքաղաքիս փոխանորդ Թէմաթաոս Պօլօս էֆէնտիի, Սեբաստիոյ փրանսական հիւպատոս Պ. Սէօնի և Եօզկատի կառավարիչ Ապօլուէ Վէհապ փաշայի Օսմանիյէ երրորդ, Պրուսայի Թաղապետական բժիշկ՝ Պետրոս էֆէնտիի Մէճիտիյէ չորրորդ և Շիրքէթի-Սայրիէի հաշուակալ Իսկէնտէր էֆէնտիի օգնականը Արրահամեան Գրիգոր էֆէնտիի և արկղակալ Բարուէական Ստեփան էֆէնտիի Մէճիտիյէի Ե. պատուանշանները տրուեցան:

— Մուսանիա-Պրուսայի գծին թըղթատարական պայուսակաց համար չըրջուն պաշտօնեայններ կարգուած են: Սոյն գծին բացման ներկայ գտնուող հրաւիրեալք անցեալ շաբաթ օր մայրաքաղաքս վերադարձան: Ուրբաթ գիշեր Պրուսայի կայարանին մէջ տրուած ճոխ հացկերոյթին մէջ բանախօսք են Վեհ. Սուլթանին ներկայացուցիչ Շաքիր փաշա, ֆրանսական դեսպանը և ընկերութեան վարչական խորհրդոյ անդամ Պ. Նալլիլ: Վեհ. Սուլթանին անունն երիցս «կեցցէ»ներով ողջունուեր է:

Ընկերութիւնը իւր գիները 45% իջեցուցեր է՝ կիրակի և ուրբաթ օրերը ծով մտնելու համար Պրուսայէն Մուսանիա գացողներուն համար:

— Ռոսոսթոյի առևտրական դատարանը վերակազմուած է:

— Զմիւռնիոյ մէջ Քաբա անուն աղջիկ մը հեռուստի գիւղ մը բնակող բըժշկի մը հետ ամուսնանալ չուզէր և իւր ծնողաց բռնադատման վրայ թոյն առնելով անձնասպան կը լինի:

— Շոգեմալայի ընկերութեանց միջեւ կեցած պայմանագրութիւնը խզուելուն առթիւ տարօրինակ մրցում մը սկսաւ Սև Մովու Ասիական նաւահանգիստները փոխադրուող փոխադրուող ճամբորդներու անցագրոյն վրայ և ամէն ընկերութիւն առ հասարակ հինգ զրուշի իջուցած են իրենց երրորդ կարգի տոմսակաց գիները, և ոմանք օխա մը հաց իսկ կուտան շոգեմալուց մէջ: Այս առթիւ գաւառացի բազմաթիւ ճամբորդք կ'ուղեւորին:

— Եւմէնի մէջ Օսմանեան քաջարի զինուորք օր ըստ օրէ նոր յաջողութիւններ կ'ունենան և ամէն օր նոր լուր կուգայ թէ հրոսախումբ և ապստամբ ցեղերը հեռացնուի կը զսպուին:

— Պրուսայի նահանգին արիւնի հունձքը այս տարուան համար չատ ա-

ռատ լինել կը թուի, չուրջ 750,000 օխա: — Զիւլիոյի Արուեստահանգիսին զրկուելիք օսմանեան արտադրութիւնք մինչեւ դեկտեմբերի սկիզբը պատրաստ գտնուելու են:

— Զմիւռնիոյ մաքսատան ամբաստանեալ պաշտօնեայ Փօնսթան էֆէնտի Պետական խորհրդոյ վճարեկ ատենէն ալ անպարտ արձակուած է:

— Սեւանիկի թրամուէյին արտօնատէր Համաի պէյ Բարիկի մէջ Օսմանեան անանուն ընկերութիւն մը կազմեր է:

— Կէլիպօլույի մէջ երեւան ելած հարսանիթը անհետացեր է:

— Էսկիսէնի մէջ մայիս 30ին կարկուտ տեղալով բաւական վնաս պատճառեր է:

— Խնուղեաց կանոնաւոր վիճակի մը վերածուելուն համար յանձնաժողով մը կազմուած է հանրածանօթ շինութեանց նախարարութեան մէջ:

— Արուսի նաւարանին մէջ մեծ թնդանօթներ ձուլելու յատուկ դործարան մը կը կառուցուի:

— Առեւտրական միջնորդ բօլիցաճիներու և քօմիսիօնճիներու նման Առևտրական և հանրօգուտ շինութեանց նախարարութեանէն թէզքերէ պիտի առնուն:

— Խարբերդի վերաքննիչ ատենին անդամոց ընտրութիւնք կատարուեր են:

— Տոք. Վուլփովիչի սպանչաց մասին տրուած վճիռը վաւերացած է Վըճաքեկ ատենէն:

— Գաւթէմուհի գնաց մայրաքաղաքիս վճարեկ ատենին անդամ Իպրահիմ պէյ՝ տեղւոյն դատական գործերը քննելու համար:

— Խարբերդի մէջ բողոքական կիրակոս պատուելի մտային խանդարմամբ իւր ամորձիքը մկրատով կտրեր է, բայց չէ մեռեր:

— Իսկէնսէրուկէն 6 ժամ հեռու գտնուած քրոմի և քարիւղի հանքերուն արտադրութեանց նմոյշները զըրկուած են աստ Զիւլիոյի արուեստահանգէն զրկուելու համար:

— Նիկովիդիոյ և Ատաբազարի չըրջակայքը երկաթուղւոյն վրայ աւազակութիւններ պատահիլ սկսեր են. հարկ եղած միջոցները ձեռք առնուած են:

— Այսքնի երկաթուղւոյն մասնագէտ պաշտօնեայք գնմանց պաշտօնէից հետ միանալով մեծաքանակ գումարներ իւրացուցեր են:

— Ռոսոսթոյի մօտակայ էրէյլի տեղը Պանտրմայէն նաւակ նստած 6 անձինք ձերբակալուեր են իրենց ութ ձիերով: Ասոնց վրայէն 150 հատ զանազան ոսկիներ գտնուեր են:

— Ս. Փրիլի պատուանշանին երրորդ

ատոյճանը նուիրած է հելլենական կառավարութիւնը կալացի Օսմ. հիւպատոս Մանուկ էֆ. Ագարեանի:

— Պասրայի Աշիւթիներուն մէջ ծագած ժանտախտը անհետանալու վրայ է:

— Գաւթէմուհի (Պօլիս) էօզպէքէր թէքքէին մէջ հիւրընկալուած Պուլսարացի Իսհաք, անցեալ գիշեր Շէյխին սենեակը մտնելով դաշոյն ի ձեռին՝ դըրամ պահանջեր է և Շէյխն ալ իւր աղքատութիւնը պատրուակելով, դաշոյնով վիրաւորեր է զնա և նորա սպասուորը:

— Պրուսայի պատժական ատենան մահուան դատապարտեր է 19 ամեայ գաղթական մը որ ֆրանսացի վաճառական մը սպաննած էր:

ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ

Հեղինակ՝ Օգրալ Ֆէօյիէ

Թարգմանիչ՝ Միշրան Թէլեւան

Իգական սեռի դատարարակութեան սահմանեալ սոյն բարոյալից իմաստասիրական վէպ, որ ԾԱՂԻԿԻ մէջ մաս առ մաս հրատարակուեցաւ, մաքուր թղթի վրայ տպագրեալ կը վաճառի ի Գին 10 շրջ, իսկ ԾԱՂԻԿԻ բաժանորդաց համար 8 շրջ: Գաւառներէ մէկ դահեկան տւելի պէտք է զրկել թղթատարի ծախուց համար:

ԽՈՒԹՈՒԹԸ ՄԻԻԹԵԼԻՖԷ ԻԼԷ

Խ Ա Ճ Է Ի Գ Ր Ա Ա Թ

Գործ

ԱՔՐԱՀԱՄ ԷՖ. ՄԱՏԹԵՍԵԱՆԻ

Ոստանգի Արտանալու Վարժարանին Նէկոյի

Թուրքերէն լեզուի ընթերցանութեան և թարգմանութեան յարմար դասագիրք մ'է, 64 էրեսէ բաղկացեալ, և կը պարունակէ Գէսի, բաւալի, քաւի, սիւանի և սիւլիս գրերով 60 դաս: Գին 2 շրջուրջ:

Ա Ր Ժ Է Ք Դ Ր Ա Մ Ո Ց			
Օսմ. լիւրան 100 շրջ. էն			
Մէճիտիյէ	108	2 վեցնոց	102 20
Քառորդ մէճիտ	107	Բուսիոյ բօլ	89 16
Մանր մէճիտ	102	Նաբուէն	87 10
Մէթալիք	98	Գրիմից	51 12
Հինգնոց	101	Անգլ. լիւր	110
Մանէթ թղթագրամ 8 98			
Գոնսոյիտէ	22	Բուս. երկ.	82 1/4
Թահվիլ. Օսմ.	83	Թապիլէ	48

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ 4. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի-Ջապթի փողոց, թիւ 61

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ

Ե.

ԳԵՈՐԳ ՊԱՏՈՒԵԼԻ ՊԱԼԱՏԵՑԻ

Ի Պալատ ծնած ու ապրած, բայց ամենուրեք բարեհամբաւեալ Պալատեցի Տէր-Յովհաննէսեան Գեորգ պատուելի Դպրին կենսագիրն ընել, կարծեմ ըստ ինքեան բաւականին գնահատելի ծառայութիւն ու միանգամայն դժուարին գործ մը կրնայ համարուիլ բանիմաց ընթերցողին համար, մանաւանդ այնպիսի ժամանակի մը մէջ, յորում Գեորգ Դպրի վախճանէն մի դարու մօտ ժամանակ կամ շուրջ 80 տարիներ անցած է, և մեք կը փորձեմք անգիր աւանդութիւններէ ու դուզնագիր աւանդութիւններէ վկայութիւններէ օգտուիլ գլխաւորապէս, մնացեալ մասն՝ մեծանուն Պալատեցւոյն թողած գնահատելի երկասիրութիւններէն ամբողջացնելով:

Այս առթիւ չեմք վարանիր յայտնել մեր ուրախութիւնը Գեորգ-Դպրի անունն ու կեանքի պատկերները վերջերս բանասէր և հետաքննին ազգայնոց ուսումնասիրութեանը առարկայ դարձած լինելուն համար, նա մանաւանդ՝ մէկէ աւելի զայն կենսագրելու ձեռնարկողաց մէջ գովելի մրցում մը տեսնելով, — ընդ որս ես բանասէր Արթ. Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Մկրեան, հրնասէր Մեծ. Յակոբ Էփէնտի Տիմիթեան, գրական Տոքթ. Թորգոմեան, զաւեշտագիր Հաճեան Յակոբ Էփէնտի և այլք — ո՛չ նուազ միտթարութիւն կ'զգայ սոյն տղերու ուրուագրողն, իբրև տրուպն կենսագրաց Գեորգ-Դպրի:

Իցի՛ւ թէ, Պալատեցւոյն կեանքն ուսումնասիրելու աշխատողներուն ամենքն ալ իրենց միտքածն ու ամբարածը ժամ յառաջ հրատարակելու, որով որ մը զիրար լրացնելով թերեւս ամբողջ կենսագրութիւնն յառաջ դարձնայ հատընտիր գիտուն մեծ անձնաւորութեան, ի փառքս Հայ մատենագրութեան վերջին դարուն:

Գեորգ-Դպիր է որդի Պալատու եկեղեցւոյ Աւագերէց Տէր-Յովհաննէս քահանային (1), բնիկ Բարերգցւոյ, որ 18^{րդ} դարուն նշանաւոր քահանայներէն մին համբաւուած և 1770ի միջոցներն վախճանած է:

Գեորգ-Դպիր ծնած է 1737ին, Իւր նախակրթանքն Տէր-Հորմէն առած, բայց ընդամին սրամտութեամբ, ըն-

(1) Եղբայր՝ Բարերգցի Զրկիր Դաւիթի:

դունակութեամբ և անխոնջ տքնութեամբ յաջողած է ուսանիլ տասնի մօտ լեզուներ, հիմնաւոր կերպիւ: Քաջահիւն կը խօսէր հին և նոր յունարէնն ու եբրայեցերէնը: այս պատճառաւ Յունաց Պատրիարքներն, Սինոդական եպիսկոպոսներն, Հրէից խախամապետներն և այլք կը յարգէին զինքն ու միշտ կը տեսնուէին հետը:

Սա իւր ժամանակին նշանաւոր հայկաբանը, յաջողակ տրամաբանը, ուղղափառ կրօնագէտը, բազմահմուտ պատմաբանը, քաջավարժ քերթողը, ներկուս գրագէտը, յոգնալեզուեան թարգմանիչը, միանգամայն և անձանձիր ազգային գործիչն եղած է:

Այո՛, Գեորգ-Դպիր՝ սքանչելագիր հայկաբան լինելով հանդերձ, քաջ գիտէր Տաճկերէն, Պարսկերէն և Արաբերէն, Եբրայերէն, Հելլենարէն, Լատիներէն և այլ լեզուներ, որոց ի նմոյ՝ պարբերաբար հրատարակած է պատմական և այլ կարևոր գործեր՝ ինքնուրոյն և թարգմանական:

Տիւզեան Յակոբ Զէլէպի (1) որ Պէզձեան Ամիրայի օրով ազգային գործոց մէջ կարեւոր ծառայութիւններ մատուցած է, Պալատեցւոյն իբրև մօտէն ծանօթ՝ հրատարակած է հետեւեալ գնահատիչ տողերն, որ ըստ ինքեան հրատարակային պերճախօս վկայութիւն են Գեորգ-Դպրի անվիճելի արժանեացը մասին:

«Պարտք սիրահամբոյր դնի մեզ արդարեւ, մերս շնորհակալու խնամոտ ըղձից բերումն ընձեռել ի յիշատակ Գեորգայ Դպրի Տէր Յովհաննիսեան, ըստ արժանւոյն ՊԱՏՈՒԵԼԻ մականունեալ, որոյ ի ծաղկաթիթի տիոց մինչ յայիս ծերութեան՝ անխոնջ վաստակեալ ի ճշգուն ուսումնասիրութեան, գիտնականաց արդեամբք ունէր ժառանգեալ զյարգ, և ի համազգեսց համարումն և պատիւ: Տեղեակ բազմասուն լեզուաց, Յունականին, Եփրայերէնին, Պարսկականին, Արաբացւոյն, Լատինականին, և Հայկականին գրաւորական ուսման, սրտեռանդն նուիրեալ զաւուրս իւր և

(1) Կը յիշուի թէ՛ սոյն Տիւզեան Յակոբ Զէլէպի, Եազըճը Օտեան Պօղոս աղայի հետ Պէզձեան Ամիրային ներկայանալով բանալին մատուցած են յետի Գուլէ 1834ին կառուցեալ Ս. Փրկչի Հիւանդանոցին, որոյ պաշտօնական բացման հանգիստը չէ կրցած վայելել անզուգական հիմնադիր-Ամիրայն:

Տիւզեան Յակոբ Զէլէպի, իբրև մշտեբիմն Պէզձեանի, շատ հոգ կը տանէր, որ նոյն շինութեան ալ և այլ նման նկատմամբ Հիմնադրին բաղձանքներն ճշդիւ գործադրուին:

Յակոբ Զէլէպի Տիւզեան վախճանած է 1817 օգոստ. ամսոյ մէջ:

գիշերս ողջոյն յօգուտ իւր ազին, ի թարգմանութիւնս, ի պատմական և յայլ շահաւէտ և իմաստալից գրուածքս, գեղեցիկ օժտեաց այրս պանծալի զիւր ազն, ժառանգութիւն անմահական թողեալ առ համազգիս զիւրն քրտանց բազմադէմ և անդին վաստակս:

Գեորգ-Դպիր՝ այսչափ վկայեալ արժանիք ունենալով հանդերձ, շատ խոնարհ մարդ էր: Հիմակուան նոր գրագէտներուն պէս յաւակնոտ և յանձնապաստան չէր:

Ահաւասիկ անոր խոնարհամտութեան մի ապացոյցն:

Օր մը՝ պատուելին, հօրեղբօր թոռան՝ Տիրացու-Դաւիթին կը հարցնէ թէ, «Ի՞նչպէս ըրիր կարգալից»:

Դաւիթ՝ առանց վարանելու, կը յայտնէ թէ՛ «ճուպ-ջուր ըրի գրքերս, կարգալի լմնցուցի»:

Սոյն վճռական պատասխանին վրայ չգարմանար պատուելին, այլ կը յաւելու թէ՛ «Երանի՛ քեզի, Դաւիթ, որ շուտով լըմնցուցեր ես: Ընդհակառակն՝ ես այսչափ կը կարգամ, կը կարգամ, այս տարիքիս մէջ, դարձեալ չեմ լըմնցուցած, տակաւին ծայրն եմ ծրարոց, դո՛ւն ի՞նչպէս ըրիր, լըմնցուցիր»:

— Հոգին լծաւ, Պէնտէկոստէ չեղա՛ւ մի, կը պատասխանէ Դաւիթ:

Ամուրի էր Գեորգ-Դպիր: Չուզեց ամուսնանալ, այլ սակայն պարկեշտ և առաքինի կեանք մը կ'անցնէր: Ինքը գեղեցիկ մարդ էր. երկայն ու փառաւոր ճերմակ մօրուք ունէր, մէկ խօսքով, անվեղար-վարդապետ մ'էր, ինչպէս ի Ռուսահայս՝ նոյն տիտղոսով կը յորջորջուէր Հիւսիսափայլի խմբագիր՝ Ստեփաննոս Նազարեանց:

Ի վերայ այս ամենայնի, Գեորգ-Դպիր՝ ժամանակին ճշմարտ լինելով հանդերձ, ճերմակեղէնը մաքուր ձիւնի պէս, հանդերձեղէնը ամիրայական էր, Ձոջերուն յատկացեալ ամենէն ազնուագոյն հագուստներով կը դարդարուէր միշտ: Իւր գլուխը Մոսկով-տէրիսի փալթափ-կը դնէր, որոյ արժեքը 500 դրուշ էր յայնժամ: Հագած էր քարիմ կիւլմէզ գաճաքս, կապած գօտին՝ Բիթֆիթար Լահոր-շալ, ձմեռները վերայէն կ'առնուր՝ Ալպուֆ-չուխայէ երկայնատուտ սամյր մուշտակ, կրկնոց՝ չուխա պինիւ, կօշիկներն՝ Մազըմ-իշի մէսք-բապուճ, ինչպէս ամառները կը հագնէր՝ Գաղղաթիոյ ասուեայ վերարկու (նիւպլէ) և սոյն կերպասէն չաւիւք, Թէյլուն մուշտակ, և այլն:

Գեորգ-Դպիր կ'ապրէր իւր գրչով ու դաստառութեամբ:

Պալատու Տէր-Մեղքոն քահանայի

որդին՝ Տէր Պաղտատար քահանայն(1), իւր մէկ սիրելի բարեկամին պատմած է թէ, ինքն՝ աշխարհական եղած ժամանակ, ամէն երեքշաբթի օրեր՝ մեծ թղթի ծրար մը (բաքէթ) ի Ղալաթիա Սեղբոս Խանը Վենետիկոսց կը տանի, և անոնցմէ ալ կը ընտրուի մը առնելով՝ Գէորգ-Դավրին կը բերէր ու կը յանձնէր ի Պալատ:

(1) Ինչպէս ուրիշ առթիւ գրած եմք, Տէր Մեղքոն՝ երկու քահանայ զաւակ ունէր, Տէր-Պաղտատար և Տէր-Ստեփան:

Առաջինը, այսինքն, Տէր-Պաղտատարը՝ Պատրիարքարանի ճիւղը լաւ մը չափած էր ու ստանձնած, երկրորդը՝ Տէր-Ստեփան՝ մշակած էր Կառավարութեան հետ յարաբերութիւնը:

Տէր-Պաղտատար քահանայն՝ 1837ին Ազգ. Հիւանդանոցին Տեսուչն էր՝ Նազար անուամբ, և իբրեւ ազգային վարչական մարմնոյ, և ի մասնաւորի Հիւանդանոցի վերին տեսչութեան անդամակցներն էին իրեն՝ հետեւեալ Ամիրայները.

Ճանիկ Ամիրա, Արհեստապետ սեղանաւորաց (Սարաֆլար Բէթիւրտասը), Յովհաննէս Ամիրա, Բիւնկեանցի սեղանաւոր.

Կարապետ Ամիրա Ազնաւուրեան, սեղանաւոր.

Միքայէլ Ամիրա Փիշմիշեան, սեղանաւոր.

Յովհաննէս Ամիրա Անտօնեան, սեղանաւոր.

Մարտիրոս Ամիրա Սաքայեան, սեղանաւոր.

Յարութիւն Ամիրա Երկայեան, սեղանաւոր.

Պաղտատար Ամիրա Գասպարեան, սեղանաւոր.

Մահտեսի Առաքել Ամիրա Պօղոսեան, սեղանաւոր:

Նոյնպէս, Պալատու սոյն Տէր Պաղտատար Աւագ քահանայն 1847ին Հոգեւոր ժողովոյ անդամ էր, ընկերակից ունենալով իրեն այն ժամանակի հետեւեալ երեւելի քահանայներն.

Տ. Գալուստ Աւագ քահանայ Օրթագիւղի.

Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Ս. Խաչ եկեղեցւոյ Իւսկիւտարու.

Տ. Գէորգ Աւագ քահանայ Արծրունի Խաչիւղի.

Տ. Պաղտատար Աւագ քահանայ Ս. Կարապետ եկեղեցւոյն Իւսկիւտարու.

Տ. Չաքարիա Աւագ քահանայ Բերայի.

Տ. Գրիգոր Աւագ քահանայ Պէշկիթաշու.

Տ. Յարութիւն Աւագ քահանայ Ղալաթիոյ.

Տ. Գրիգոր Աւագ քահանայ Սամաթիոյ:

Եւ սակայն Աստուածատուր Պատրիարք թէ՛ Տէր Մեղքոնին և թէ՛ Տէր Պաղտատար որդւոյն՝ այն աստիճան հակառակ վարուած է, որ երբ Տէր Պաղտատարին զաւակը՝ այժմու Պալատու Տէր Մեսրոպի քահանայն՝ պիտի ձեռնադրուէր, վերջին ծայր կ'ընդգլխանայ,

Վոսիորի Եւրոպական եզերքը՝ Առնաւլուտ գիւղէն վար գիւղ մը կայ, Գուրուչէձմէ, ուր մեր ամիրայից ոմանց ամարանոցները կը գտնուէին: Այդ գիւղին ծովեզերեայ մի ապարանին մէջ — որ յետոյ Քիւրքճիխանլեան Ամիրային կողմանէ գնուած է — Յոյն երեւելի գերդաստաններէն կը բնակէր Ուլազ-Պուլտանի պէյը, որոյ Գաբու-Քեհ-Կասին էր Ստեփանաքի պէյ յԱռնաւլուտ-Գիւղ: Պէյին գրացին էր Ուզուն Յարութիւն Ամիրան, պապն մեր գիւտցած Երկանեանին:

Պէյը՝ դրացի ամիրային այցելութիւն մը կուտայ օրին մէկը: Աստի և անտի խօսքերէ վերջը, յիշեալ երեւելի Յունազգին կը գովէ ու կը փառաբանէ զԳէորգ-Պատուելին և կը հարցնէ թէ, «Արդեօք մերին Հօճա-Գէորգը չէ՞ք ճանչնար, որ պայազատացս յունարէն և տաճկերէն կը դաստիարակուէ:»

Յարութիւն Ամիրայն՝ յապուշ կըրթած, «ոչ չեմ, ճանչնար այդպիսի Հօճա մը, լեզուագէտ պատուելի մը մեր ազգին մէջ», կը պատասխանէ:

Յոյն ալ զարմանքը չպատրուակելով, կը շարունակէ թէ՛ «Ի՞նչպէս անծանօթ կը մնայ Ձեզ այդպիսի մեծատաղանդ և հազուագիւտ պատուելի մը», և կը յաւելու. «Ես յունազգի լինելով հանդերձ, Գէորգ-Հօճային յանձնած ու վստահացած եմ զաւակացս Հելլեններէն բարձրագոյն դասերը: Այդ անձ ոչ միայն իմ ազգիս մէջ գտնուող էլէնիքա գիտցողներէն աւելի քաջ յունագէտ մ'է, այլ և Արաբերէնի, Իպրանիճէի, Պարսկերէնի, Իտալերէնի, Լատիներէնի մէջ հաւասար քաջալու է. և կրնամ ըսել, իրեն շար լեզուագէտ չգտնուիր Յոյն և Հայ ազգին մէջ. ահա՛ այս պատճառաւ՝ շատ գիշերներ, Գէորգ-Հօճան քովս կ'առնում, կը նըստեցնեմ, ու խօսեցնել տալով և խորհրդակցելով՝ իւր արտայայտած գաղափարներէն, կարծիքներէն, գրական հմտութենէն ու քաղաքակրթական բարեմասնութիւններէն յանձնուս կ'օգտիմ:» Եւ զարմանք կը յայտնէ՝ թէ այսպիսի օֆտեալ գրագէտ մը, հանճարեղ լեզուագէտ մը՝ իւր ազգակիցքն ի՞նչպէս չեն ճանչցած ու գնահատած: Այս և ասոր նման հարց պատասխաններէ վերջը, Յարութիւն Ամիրայն կ'որոշէ՝ որ օր մը յատուկ և փառաւոր սեղանով պատուէ զյիշեալ Գէորգ պատուելին, հրաւիրելով միանգամայն ժա-

բացագանչելով թէ՛ «Ես Տէր Մեղքոնին օճախը, Տէր Պաղտատարին քահանայական ցեղը ջնջել կը նայիմ ու կ'աշխատիմ, կը զարմանամ թէ՛ նորէն Տէր Մեսրոպի ձեռնադրութեամբը Ֆիլիպիքովի՞ք ընել կ'ուզուի այդ ցեղը»:

մանակակից ազգային ամիրայներուն մեծամասնութիւնը:

* *

Խրախճանաց և հացկերոյթի պատճառութիւնք կը լինին և որոշեալ օրն կը համախմբուին Ուզուն Յարութիւն Ամիրային բնակարանն ի Գուրուչէձմէ, Եղիազարեան Նիկողոս և Ստեփան Ամիրայք, Ազնաւուրեան Գասպար Ամիրայն, Հաճի-Չէլէպի Յովհաննէս Ամիրայն, Զըւընեան Մուրատ աղայն, Պապայեան Կարապետ աղայն, Գապտանիաշալըները, Սեղբոս Սարաֆը, Փափազեան մահտեսի Սիմէօն Տէր Մովսէսեանը, Սահակ Ամիրայն և իւր եղբայրն, և այլք:

Ասոնք ամենքը՝ առաջադրեալ ժամուն՝ կանուխէն հասած են հանդիսատուներ, սակայն Գէորգ Պատուելին տակաւին չ'երեւիր: Ժամադրութիւնը անցած է. և ամիրայներէն անհամբեր մը՝ Սեղբոս Սարաֆ՝ դիտել կուտայ հանդիսականաց և կը գտնուի թէ՛ «պէ՛ աղբերտանք, այդ գալիք մարդը քանի հազար ֆէսէյի տէր մարդ է, որ այսչափ ճշակտոր կ'ելլէք կոր, այսչափ ժամանակ՝ պարապ տեղը ծով ծարաւ կ'սպասենք կոր, ո՞վ է այդ մարդը տեսնենք»:

Ուրիշ Ամիրայ մը՝ Կէս-արձագանգ լինելով առաջնոյն, կը արտնայ թէ՛ «վարժապետի մը համար կ'արժէ՞ որ սպասեն Ամիրայները՝ Ազգին Մեծ Աղայները»:

Հիւրընկալ Յարութիւն Ամիրան կը պատասխանէ հարցասէրներուն թէ՛ «արգարեւ սպասուած հիւրերնիս ոսկիով հարուստ մէկը չէ, սակայն քան զամէն դանձ յարգի է, մտքով ու արժանեօքը՝ գերազանց հարուստ մ'է, և մեր գիտնական կարծեալ բոլոր տիրացուներն՝ ծախու կ'առնուս այս Պատուելին»:

Եւ ահա՛ սոյն միջոցին՝ Գէորգ-Դավր կը ժամանէ անդ, և կը տեսնուի Ամիրայից Ակումբին հետ, որք կը գնահատեն թէ՛ պատուելին իրօք մինչև ցայն վայր տեսնուած սովորական մահկանացու պատուելիներէն չէր, այլ Ամիրայներէն աւելի շիֆ տարազներով զարդարուած պատուաւոր անձնաւորութիւն մը:

Խրախճանաց հանդէսը կը կատարուի, ամենայն փառաւորութեամբ, և Գէորգ-Դավր՝ ժամանակակից Ամիրայներուն ու Զօջերուն անձամբ ճանչնալու և մոերմանալու պատեհը կ'ունենայ այս առթիւ:

* *

Գուրուչէձմէի ամիրայական սեղանը ու խրախճանաց հանդէսը կը լսեն Խասգիւղի Ամիրայք և իսկոյն ի Պալատ

մարդ զրկելով՝ գոյորդ-Դպիր ի խառ-
գիւղ կը կոչեն և կարգաւ իրենց տու-
ները կը հրաւիրեն, սկսեալ Պալա-
քանցի Յարութիւն ամիրայէն՝ (Սարաֆ-
լար Գեհեասը), Մարգար Ամիրայն,
Կէլէլէան մահտեսի Պօղոս Ամիրայն,
մահտեսի Մինաս Ամիրայն, Տաքէս Ա-
միրայն, Արփարեան Մկրտիչ Ամիրայն,
Գարաքեհեա մահտեսի Աբրահամ Ամի-
րայն, Չերազեան մահտեսի Գասպար Ա-
միրայն, և այսպէս, իւրաքանչիւրին
բնակարանը՝ 10ական կամ 5ական օրեր
կը հիւրընկալուի, և երկու ամսոյ չափ
ի խառնուրդ հիւր կը մնայ, արժանավայել
կերպիւ մեծարուելով:

Ամիրայք՝ պատուելոյն հետ սերտիւ
կը մտերմանան, և կարծեաց փոխանա-
կութիւններ կ'ընեն՝ այլ և այլ խնդրոց
մասին. եզրակացութեան գալու մօտ
Ամիրաներէն մին կ'ըսէ.

— Ճանճմ Պատուելի աղա՛յ, քեզի
աղաչանք մը պիտի ընենք, չէ՛ չպիտի
ըսես, ու մեզի կտորես:

— Ի՞նչ է այդ, կը պատասխանէ
Պատուելին.

Ամիրայն նորէն կը շարունակէ. —
Խառնուրդի մէջ մեծ վարժարան մը
(բարձրագոյն ըսել կ'ուզէ) պիտի հիմ-
նենք, կանոնադրը դուք պիտի շինէք:
Վարժարանին պատասխանատու Տնօրէ-
նը և առաջին դասատուն Դուք պիտի
ըլլաք:

Եւ այս պատեհիւ մինչեւ իսկ կը
փորձուին հարցնել իրեն թէ՛ ի՞նչ ամ-
սական վարժապետով կ'ընդունի առա-
ջարկուած պաշտօնը և գոհ կը մնայ:

Գէորդ-Դպիր առ այս կը լակոբանէ
թէ՛ «անհնարին բան է այդ, խորհուրդ-
նիդ գեղեցիկ է, բայց չըլլայ որ Ձեր
նոր ճանչցած պատուելիին (իրեն հա-
մար կ'ըսէ) այդ բարձրագոյն հաստա-
տութեան մէջ պաշտօն յանձնէք: Անի-
կա կարօտ մարդ չէ. վարժապետու-
թեան միւլսան մարդ չէ: Այս է ձենէ՛
Պալատցի պատուելիին առաջին և վեր-
ջին խնդրած վարձքը:

Եւ այսպէս, ջուրը կ'իյնայ խառ-
գիւղի Ամիրայներուն նոյն ժամանակ
բարձրագոյն վարժարան մը հաստատու-
լու համար երկնած ծրագիրը:

Իսկ Գէորդ-Դպիր, երկամսեայ բա-
ցակայութենէ ու հիւրընկալութենէ կը
վերադառնայ ի Պալատ:

Տէր-Մելքոն (1) կը լսէ պատուելիին

(1) Պալատու Տէր Մելքոն Աւագ քա-
հանայն ոչ միայն թաղին Ամիրայից և
մասնաւորապէս՝ Խորասանեան Յով-
հանէս Ամիրային տաներէցն և խառ-
գիւղի բոլոր Ամիրայից սիրելին էր, այլ
և նոյն ժամանակի Ազգին մէջ գտնուող
բոլոր գրագէտներն զինքը կը յարգէին
ու կը սիրէին, զի բաւականին գրոց

գալուստը, խիոյն բարի եկարի կը փու-
թայ Գէորդ-Դպիրն. և կը հարցասիրէ
թէ՛ — ո՞ւր էիր, պատուելի՛:

Պատուելին սրախօսութեամբ կը պա-
տասխանէ.

— Խառնուրդ-ցի (ծի) էի, դարձեալ
եկայ՝ Պալատ-լու (լու) եղայ:

* *

Արժան է յիշել թէ՛ Գէորդ-Դպիր՝
Տ. Յովհաննու պատրիարքութեան ժա-
մանակ, 1810ին ի Մայր-Եկեղեցւոյ յե-
կեղեցականաց և յաշխարհականաց խա-
ռըն՝ հնգիցս գումարեալ ժողովոց մէջ,
ո՛ւր Հայ կաթողիկոս միութեան խնդիրն
առաջին անգամ մշակուած և ծեծուած
է, ներկայ գտնուած է պաշտօնապէս,
ընկեր ունենալով ի վարժապետաց՝ Տէր
Մեսրոպ քահանայ(1) Մայր-Եկեղեցւոյ,
Փէշտմալեան Գրիգոր Պատուելին, խա-
չատուր և Յարութիւն վարժապետներն
և այլ տասն և ութ անձինք:

Սոյն ժողովոյն մէջ յուզուած վիճա-
բանութեանց խնդրաճառ դրուած է՝
Հաւատոյ Հանգանակն Նիկիական:

Ասկից զատ, «Ի Հօրէ Բղիսի և յորդ-
ւոյ ելանէ» դաւանութեան վարդապե-
տութիւնը պաշտպանած է Գէորդ-Դը-
պիր ընդդէմ կաթողիկոսի:

Երբորդուքիւնն Նիւթ ընտրելով, Գէ-
որդ Դպիրն՝ կրօնական տետրակ մ'ալ
յօրինած լինելը լսած եմ խառնուրդի Նա-
հապետէն, Արժ. Արծրունի Տ. Գէորդ
Աւագ քահանայէն:

* *

աշակերտ ալ էր: Ժամանակակից պատ-
մութիւն մը գրած է Տէր Մելքոն, որ
կը պարունակէ Երեմիա Չէլէպի մի կա-
րեւոր ոտանաւոր գրուածքը:

Տէր Մելքոն՝ ի Պալատ Գիրէմիթ-
փողոցը կը բնակէր, և իւր տունն՝ նա-
հապետական կազմութիւն մը ունէր.
ինքն՝ ու իւր զաւակներն՝ Տէր Ստե-
փան և Տէր Պաղտասար, ու թոռն՝ Տէր
Մեսրոպ՝ զաւակներով ու թոռներով,
ամենքն ալ քահանայ էին, ու պատկա-
ռանք կ'ազդէին թաղեցի ամէն ազգի
ժողովուրդեան:

Պահճէ-գաբուի հանրածանօթ ջրա-
վաճառ-լրագրավաճառ Խորխորունի Պօ-
ղոս աղան պատանեկութեան ատեն
Մատթէոս Պատրիարքի յանձնարարու-
թեամբ Եւդոկիայէն ի Պօլիս գալով,
ուսում առնելու համար՝ Տէր-Մելքոն
քահանային տունը զրկուած ու անդ-
բաւական ժամանակ մնացած ու քիչ
շատ բան ուսած է: Կը պատմէ Պօղոս
աղան թէ՛ Տէր Մելքոն երբ վախճանե-
ցաւ, անոր ունեցած բազմաթիւ ձե-
ռագիրներէն և տպագրեալ գրքերէն
շատը՝ նոյն իսկ մահուան օրն՝ ետպաշար-
արուեցաւ:

(1) Բնիկ Կարնեցի է, և այս Տէր
Յարութիւնեան Տէր Մեսրոպ քահա-
նայն՝ գրաբառ լեզուաւ Գերականու-
թիւն մը յօրինած ու 1826 ին հրատա-
րակած է ի Կ. Պօլիս, յ'Օրթագիւղ, ի
տպարանի Պօղոսի Արապեան:

Երբորդութեան խնդիր մ'ալ տար-
բեր միջավայրի մը մէջ յուզուած է:

Կ'աւանդուի թէ՛, պատուելին օր մը
լիանաւակով (տօլմուշ գայլդ) Պահճէ-
գաբուէն ի Պալատ գնացած պահուն՝
ուղեւորներուն մէջ մոլեռանդ Հրեայ մը
կը գտնուի, որ կը ժպրհի ծաղրաբանել
զմերայինս, առարկելով իբր այն թէ՛
սոքա երեք աստուածք ուրոյն կը պաշ-
տեն՝ որպէս զիրեար փոխանակող ի
մահուան, եթէ պատահի նոցա մեռա-
նել: Գէորդ-Դպիրն առ այս հարցասի-
ւիրաբար պատասխանելով թէ՛ «կը տես-
նե՞ս ձեռներս որ կը գործեն», ցուցու-
ցած է նմա ձեռնձիգ լինելու համար նախ
իւր բուռը, ապա դաստակը, և հուսկ՝
ուսը և յետոյ բացազանչած է թէ՛ թէ՛-
պէտ անոնք թէ՛ին առանձին մասերն են,
այլ միասնական և հաւաքական են յու-
ժի և ի գործս, և իբր դրական ապա-
ցոյց սոյն իրականութեան՝ չէ վարանած
ուժգին ապտակ մը հանելու յերեսս
հրէին՝ ի գործնական հաստատութիւն
ձեռաց ուժոյն ու պաշտօնին, և եւս
առաւել ի զօրաւոր և յաներկայ վիա-
յութիւն ամենասուրբ Երբորդութեան
մեծ, սքանչելի և անխմանալի խորհրդոյն:

(Շարունակելի) Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Փ Ո Ք Ր Ի Կ Դ Ա Ս Մ Ը

ԱՌ Պ • ՄՕՐՕ

«Ճէրիաէի-Շարդիյէ» ի և «Արե-
ւելք» ի մէջ Ձեր հրատարակած Գը-
րագատականները ուշի ուշով կար-
դացի:

Ահա ստացած տպաւորութիւնս.

Բառին բովանդակ նշանակու-
թեամբ, աշխարհագրութիւն չէք
գիտեր դուք, Պ. Մօրօ, վասն զի,
ցնծութեան աղաղակներով, 42 հատ
սխալ կը հաշուէք Փալադաշեան Աշ-
խարհագրութեան մէջ, մինչդեռ ա-
նոնցմէ միայն 10 հատը կրնայ սխալ
համարուիլ, անոնք ալ անուշադ-
րութեան և բառերու սխալ գոր-
ծածութեան արդիւնք են:

Կ'երեւի թէ, այսպէսով, կ'ու-
ղէք քննադատելու քաջութիւննիդ
փորձել և վարժութիւն ստանալ.
շատ լաւ կ'ընէք, բայց սխալ գիրք
ընտրեք էք, լաւ կ'ըլլար եթէ այդ
Բնագրասկան փորձերն սկսէիք Պ.
Դր. Մարգարեանի աշխարհագրու-
թեան ընդարձակ և համառօտ գըր-
քերէն, որոց մէջ ԴիւրնիթեմԱԲ
և ԱՌԱՏՈՒԹԵԱՄԲ պիտի կրնայիք
գտնել ԻՐԱԿԱՆ անհամար սխալներ:

ԴԻՏՈՂ (1)

(1) Աշխարհագրութեան դաս մ'ես
ունիմք տալ Պ. Մօրօյի «Ծաղիկ» յա-
ռաջիկայ թուով, իւր երկրորդ Գրա-
դատականին առթիւ: Թ. Գ. Փ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Արեւու բծերը. — Պ. Ժանսսէն գիտութեանց Ակադեմիային ներկայացուցած է արեւու գեղեցիկ լուսանկարներ, որոց մէջ յայտնապէս կ'երեւին այլ և այլ դիրքն այն մեծ բծին որ երեւելով արեգակնային սկաւառակին վրայ, շատ աստղագիտաց կարծել տուաւ թէ պատճառն էր վերջին մթնոլորտային անկարգութեանց: Պ. Ժանսսէն կը շատանայ հաւատարմով թէ թերեւս այս բիծ առնչութիւն մ'ունենայ մագնիսական խառնակութեանց և հիւսիսայդներու հետ. այս առթիւ պէտք է յիշել թէ փետրվար 13ին ի հիւսիսային Ամերիկա սքանչելի հիւսիսայգ Բ'երեւցաւ: Արեգակնային այս բիծը շատ մը բիծերէ բաղկացած լինելով, արեւու երեսին վրայ գրաւած միջոցը երկրագնդին մակերևութին գրեթէ հարիւր անգամուան կը հաւասարէր. այս բիծ փետրուար 5ին երևելով 18ին աներեւութացաւ:

Կարկասն առանց կարի. — « La Science Pratique » հանդէսը կարկասն ընելու նոր և յարմար կերպ մը կը յանձնարարէ, թէ՛ փոխանակ կարկասնը կարելու, լաւ է զայն հալած կիւթթաբէքայի միջոցաւ փախցնել, և որ լըւացմամբ երբեք չ'ընտանդիր:

Իհսական Զբօսանք. — Հետեւեալ պարզ փորձն ո'չ միայն մեզ հեղուկներու խտութեանց վրայ որոշ գաղափար մը կուտայ, այլ և մի քանի պարագայից մէջ զբօսանք և զարդ եւս կրնայ լինիլ: Զրոյ ապակեայ գաւաթ մ'առէք և անոր մէջ մաս մը կապոյտ գոյնով գունաւորեալ ջուր դրէք, յետոյ հասարակ ձէթ և ապա կարմիր գունաւորեալ ալքօլ: Այս երեք տարբեր գոյներ ունեցող հեղուկներն, որոշ կարգով մը պիտի շարունին գաւաթին մէջ, իրենց խտութեանց աստիճանին համեմատ: Զրոյ խտութիւնը 1 լինելով՝ գաւաթին յատակը պիտի մնայ, Զրոյ վրան ձէթն որոյ խտութիւնն է 0,915, և ձէթի վըրան կարմիր ալքօլն որոյ խտութիւնն է 0,795:

Թարգ. Թ.Ա.Թ.ՈՒԼ ՔԻՒԲԵԼԵԱՆ

Այնքապ

ԵՐԳԱՐԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Ազգային կատակերգակ և անուանի դերասան հանգուցեալ Գ. Հ. Ռշտունիի, Յ. Աճէմեանի, Թ. Նալեանի և այլոց կողմանէ յօրինուած թատերական զըւարճալի երգերու և պարերգներու սոյն հատընտիր հաւաքածոյն, որ կը պարուկէ ի մէջ այլոց բարեյիշատակ Արմենակ Հայկունիի հայերէն լեզուաւ գրած երկնային Վիճակի-զուարճալի ասացուածքներն, կը վաճառի 3 դահեկանի:

ՊԻՏՈՆԻ ԽՐԸՏՆԵՐ

Առանց հողի մեակութիւն. — Յայտնի է թէ, ծաղիկունք կատարելապէս կրնան ապրիլ մամուռի մէջ, մինչեւ իսկ պտղատու ծառերն՝ ճիշդ այնպէս իրեն թէ պարտիզաց մէջ տնկուած լինէին: Այս իրողութիւնն ո'րքան ալ արտասովոր երեւի մեզ, պիտի տեսնեմք սակայն որ մշակման այս եղանակն մի միայն ճշգրիտ նմանութիւն մ'է այն բազմաթիւ օրինակաց զորս բնութիւնն ինքնին կը ցուցնէ մեզ: 1876էն ի վեր է որ կ'գրադուի մամուռոյս մշակութեամբ. այս զարմանահրաշ հնարքով կրնամք ուրեմն մեր բնակարանաց մէջ՝ լուսամտից առջեւ ունենալ թեթեւ կողովակներ, յայլուր դիւրաւ փոխադրելի, որոց մէջ կարելի է տնկել շահարահ (սեհալոյ), խնդածաղիկ (հերմայի մէնէ-սէ), զատկածաղիկ, մեթուր (մէնուր), և լին, մագլցիկ բոյսեր, համեմատեալ տունկեր՝ ինչպէս քեղահարոս (cerfeuil), տերեւաղուարձ ազատքեղ (ֆրէնկ մաղ-սանցը), ելակենիի արմար՝ որոնք ժամանակին պիտի պտուղ տան. և վերջապէս, պատշգամաց վրայ պիտի ունենամք պտղեղնաւէտ ծառեր զորս պիտի կարենամք ի վերջոյ դետեղել մեր շքակահոց վրայ, ի յարգ և ի զարդ մեր դահլճաց:

Երախայից զիլու եւ երեսի քեփ (Gourme). — Այս բանին համար պէտք է յաճախակի լըւացումն նաշիհի (հիւսսա-սա) կամ ընկուզի տերեւոց ջրով, ո'չ միայն մաքրութեան նպատակաւ, այլ մանաւանդ մանկիկն քերուրտութե՛ որով և մորթային կեղևներն փրցունելէ ազատ պահելու համար. պէտք է նաև ստէպ ստէպ նաշիհի փոշի ցանել թեփոտած տեղուանքն: Երբոր կոշկոռները չորնան՝ բուսալիւրի ծեփելիքով դիւրացուցէք անոնց ջնջումը:

Առ առաւելն եռամեայ տղեկներու րամար թեթեւ մաքրադեղեր ցուցուած են, ինչպէս օրինակի համար sirop anti-scorbutiqueի գործածութիւնն:

Շահեկան դեղատարագ մը. — Հետեւեալ Ֆոնմիլը կը յանձնարարեմ որ պատրաստեն ու գործածեն բոլոր այն փափկակազմներն — մանաւանդ գեղեցիկ սեռն — որոնք մասնաւորաբար հետամուտ են իրենց ձեռաց կաթնաբոյր սպիտակութիւն մը տալու:

Լեղի նոյ պիւր	100	կրամ
Հիրիկեան փոշի	100	»
Փոշիացեալ արեթ	100	»
Ճերմակ օճառի փոշի	100	»
Օշնա նիւնածխատ	50	»
Կնդրուկի մուզ	9	հզրդկրմ.

(Պօն Մաման)

Թարգմ. Թ. ԼԱՊԵՐԵՆՆԵ

ՍԱՄՓՍՈՆ

ԱՅՈՒՄՆ ԵՒ ԵՐԱՐՈՒՄՆ ՄԱՋԵՐՈՒ

Կ. Պոլիս, 15 Մուհարրէմ, և 8 Օգոստ, 1307

Տեաք Լարաֆեան եղբարք,

Իեղ-Գործի և Խառ-Գործի

1305 թուականին էր որ Ձեզ հետ մէկ տեսութեան մէջ՝ նախապէս տեղեակ լինելով արհեստի մէջ Ձեր ունեցած ճարտարութեան և լուրջ արուեստասիրութեան՝ խնդրեցի մազերը երկարող, աճեցնող և հիւանդ արմատները կենդանացնող պատրաստութիւն մը իմ աղջկանցս համար:

Սոստացաք իբր փորձ ի մասնաւորի պատրաստել այդպիսի դեղ մը, սլայմանաւ որ երբեք չ'պիտի պարունակէր իւր բաղադրութեան մէջ հակառողջական նիւթեր, և ըստ Ձեր խոստման շրկեցիք ինձ երեք շիշ սոյն դեղին:

Արդ՝ ինչպէս յայտնած եմ հրապարակաւ շնորհակալութիւնս 14 մուհարրէմ և 7 օգոստ. թուակիր «Սաատէթ» լրագրոյ միջոցաւ, նմանապէս սոյն մասնաւոր գրութեամբ կը յայտնեմ խնդակցութիւնս, վասն զի Ձեր պատրաստութիւն յաջողապէս պսակուեցաւ, աճեցնելով, երկարելով և գեղեցկացնելով աղջկանցս մազերը, և կը յաւելում թէ այդ դեղ չ'պարունակէր իւր մէջ հակառողջական նիւթեր այլ և այլ պատրաստութեանց նման:

Ընդունեցէք շնորհակալութիւնս թօգարուի Կայս. Պալատան պահեստի զօրաց բժիշկ դեր հազարապետ Հիւսէօն:

3-10

ԲԱՐՍԵՂ Ե. ԷՔՍԵՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒԻ
Բ. ՀԱՏՈՐ

ՉՈՐՍ ԸՆՏԻՐ ՆՈԹԱՅՈՎ ԵՐԳԵՐ, 110 ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԿԻՐ, ՊՈՍՅՈՐԻ ԱՇԽԱՐՀԱՀՈՅՑ 26 ԸՆՏԻՐ ԳՐԶԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՔ, բառեր, դասախօսութիւնք, ընթերցանութիւնք, հարցմունք, նամակք, շարադրութիւնք, բաղդատեղի-բառք, բացատրելի-բառք, գաղափարաց բացատրութիւնք, բացատրութիւնք բառից, սահմանք բառից, շատասութիւնք, քերականական վարժք, գծագրութիւնք, առածք, առակք, նմանութիւնք, ոտանաւորք, հանելուկք, կրթանք, ուղղելիք, հետուութիւնք, հականիւք, դիտողութիւնք, զուարճալիք, լրանալիք, ուղղագրութիւնք, նմանաձայն-տարանիւք, նոյնանիւք-այլատառք, նոյնատառ-տարանիւք, բաղադրեալ-ասացուածք, հաստատական-հարցականք, հաստատական-բացասականք:

Սոյն գիրքն նոր և դիւրուսոյց դասագիրք մ'է, որ արդէն 25 ընդունելութիւն գտնելով Գ. տպագրութեամբ իւրոյ ընծայուած է 4000 օրինակներ սպառելէ յետոյ, կը բաղկանայ 320 էջերէ, հակառակ իւր ստուարութեան և մեծաքանակ ծախուց կը վաճառի 5 դահեկանի:

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ

(Ընտանեաց ասպագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԳԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԿԼԵՑ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ
կառավարութեանԿեդրոնատեղի՝ 61, Բէֆուսիք փողոց,
Լիոն (Ֆրանսա)

Առահւմէքէլ Գրքէլ-100,000 000 ֆր

ԼՎԱԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպատակաւ համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամով մէջ վերականգնել դրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնը բազմադիմի են, ինչպէս շարժական արժէից և փոխ տրուած դրամագլխոյ ապահովագրութիւն, կորուսեալ դրամագլխոյ մը վերականգնութիւն: Երաշխաւորութիւնը և Գլխավճարք՝ փոխառութեանց և ճարտարուեստից և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոյ, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնը որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ Էֆէնտի թէլլալեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահճէ—Գարու, Շէյխ—Իսլամ խան, թիւ 11:

Կ Ա Ր Մ Ի Ր Մ Ա Ն Ա Ծ

Դաւառներէն Վճարիկի Յանձնակատարութեան Դրասենեկին ապսպրուած մանածն մինչև ցարդ կը գնէինք մայրաքաղաքիս հրապարակէն: Պատիւ ունիմք յայտնելու այժմ մեր դաւառացի բազմաթիւ յաճախորդաց ու թղթակցաց որ, չնորհիւ Եւրոպական առաջնակարգ գործարանի մը հետ մեր նոր ինտրոյ հաստատած յարաբերութեան, կարող պիտի լինիմք յետ այսորիկ հայթայթելու կարմիր մանածն յոյժ գոհացուցիչ գիններով, զնուսնները կատարելով ուղղակի արտադրող գործարանէն և ապրանքայ հակերը Եւրոպայէն ուղղակի զրկել տալով ուզուած նաւամատոյցները: Նմոյշներ և մանրամասն տեղեկութիւններ կը զրկուին փափագողաց: Կը բաւէ զրկել միայն թղթատարի ծախքն:

ԳԱՒԱՌԱՅԻՐՅ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Դաւառաց մէջ շատ անգամ կը պատահին այնպիսի դատեր ու գործառնութիւններ որոնք, իրենց բնութեամբ և ըստ օրինի, Պոլիս փոխադրուելով միայն կրնան շարունակուիլ և իրենց լուծումը գտնել: այս կարգէն են Վճարիկի Ատենին ներկայանալի դատերը (թէմիզ), օտար հպատակաց հետ դաւառաց մէջ տեսնուած դատերուն վերաքննութիւնը (խսքինաթ), Թէսթրաքը Շէրի վերաբերեալ դատեր, Ֆէրվանաէի վերաբերեալ գործեր, և այլն, և այլն:

Դաւառացիք յաճախ պարտաւորուած կը լինին այսպիսի դատերու և գործերու համար ի Պոլիս փոխանորդ մը կարգել իրենց, բայց դիւրութիւն չունենալով ճանչնալու մայրաքաղաքիս փաստաբանաց բազմութեան մէջ վստահելները ու ձեռնհասները, հազար դժուարութեանց կը հանդպին, և յաճախ անկարող կամ անփոյթ մարդոց գործ յանձնելով, վերջ ի վերջոյ կը կորուսանեն իրենց իրաւունքը:

Դատական այս կարգի խնդրոց մէջ դաւառացւոց ծառայութիւն մը մատուցանելու համար, «Մաղիկ» Յանձնակատարութեան Դրասենեակը կապակցութիւններ հաստատած է մայրաքաղաքիս ամենէն ձեռնհաս փաստաբաններէն մի քանիին հետ: Կը հրաւիրուին այս կարգադրութեան օգտուիլ նոքա որք այդ տեսակ գործեր ունին:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ****ՀԱՆԳԵՐՁ**

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ԳՈՒՆԱՌՈՐ ՏԱԽՏԱԿՕԲ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅՈՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Բազմաթիւ ուսուցիչք և վարժարանաց Տնօրէնք սոյն դասագրքին հրատարակութեան փութացումը խնդրած լինելով, կը յայտարարեմք թէ տպագրութիւնն աւարտած է և այս պահուս Պաշտատեան տպարանը կ'ըրաղի գրքին մէջ զետեղուելիք աշխարհացոյց գունաւոր տախտակաց պատրաստութեամբ:

Ձանազան վարժարաններէ եղած ստիպողական խնդրանքներուն գոհացում տալու համար, սոյն դասագրքը այժմէն իսկ հրապարակ ելած է և յանձնարարութիւնը սկսած են կատարուիլ՝ աշխարհացոյց տախտակներն յետոյ առանձինն զրկուելու պայմանաւ: ամէն ոք կարող է գանձել դասագրքին մէջ ինքնին զետեղել:

Դասագրքի կանխաւ որոշուածէն շատ աւելի ստուար և բազմաժախ եղած ինքելով, առ այժմ պիտի վաճառի ի գին 4 զրշ, իսկ աշխարհացոյցներու տպագրութիւնն աւարտելէ յետոյ 6 զրշ: Մեծաքանակ յանձնարարողներու համար՝ աշխարհացոյցներն յետոյ առանձինն պիտի զրկուին, կը բաւէ որ 2 զրշ տարբերութիւնը վճարուի:

Դասագրքի օգտակարութեան մասին խօսիլն աւելորդ կը համարեմք, ուսուցչաց թողով գնահատել այն բանաւոր և դիւրութեանց եղանակն որով աշխարհագրութիւնն աւանդուած է այս Դասագրքին մէջ, տպագրութեան, թուղթին, պատկերներու և աշխարհացոյցներու գեղեցկութիւնն, Օսմանեան Պետութեան համար տրուած ընդարձակ բաժինը, մանաւանդ այն մասնաւոր պատկերացոյց տախտակը որուն մէջ յստակօրէն ի տես եկած են ցամաքաց և ջուրց զանազան ձեւերն, որոց առընթեր գունաւոր գծագրութիւններով ցոյց տրուած են նաեւ թէ ինչպէս կը գծուին կամ կը ներկայացուին անոնք աշխարհացոյց տախտակներու վրայ, բան մ'որ բոլորովին նորութիւն է և, գործոյն ուրիշ առաւելութեանցը հետ միանալով, կրնայ այս դասագրքին իւր տեսակին մէջ միակը հանդիսանալ:

HOTEL DE PARIS

BUDAPEST, Vazi-koor

Պիւտաբէլթ քաղաքի ամենագլխաւոր կեդրոնի վրայ հաստատուած այս առաջնակարգ հիւրանոց ամէն յարմարութիւն ունի ճանապարհորդաց հանգստութեան համար: Խոհանոց եւրոպական և թրքական: Թուրքիացի ճանապարհորդք այս հիւրանոցը կ'իջևանին: Գիները դիւրամատչելի: